Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6344
6345
6346
6347
6348

9(62)
U-31

1295 1875
1903
1904
1893

738
916
50
Printed in Turkey

ԳԻՒՏԵԶՆՈՒԹԻՒՆՔ

ՄԵԾԻՆ

ՎԱՐԴԱՆԱՅ

ԵՒ

ՎԱՂԱՆԴԱՑ

ՄԱՄԻԿՈՆԵԻՑ

ԵՒ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

ԵՒ

ԱՌՈՒՄՆ ԻՅՈՒՆԱՅ

ԳՐԵԱՑ

ՏԻԳՐԱՆ Գ. ՔԱՓԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Գ. ԹՕՋԼԵՄՆՑ

)(1875)(

9(47-925)

ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԵԾԻՆ
ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՎԱՀԱՆԱՅ

ՄԱՄԻԿՈՆԵԻՑ

ԵՒ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

ԵՒ

ԱՌՈՒՄՆ ԻՑՈՒՆԱՅ

ԳՐԵԱՑ

ՏԻԳՐԱՆ Գ. ՔԱՓԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Գ. ԹՕԶԼԵՄԵՆՑ

)(1875)(

11177

2379
Y 40

Ի ՅԻՇԵՑԵԼԻ ԸՆՄԸՀ ՀՈԳԻՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱՊԵՐՃ

ՄԱՆՆԻԿ ՕՐԻՈՐԴԻ

ԹՕԳԱԹԼԵԱՆ

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՍՐՏԻՒ ՆՈՒԻՐԷ

ՏԻԳՐԱՆ Գ. ՓԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՇՏ ԻՄ

Տաժանաչատ է իմ կորուստ անմման
Իմ Սիրալի «Մանկիկ» որդւոյս բաժանման
Բախտա՜ն, ցնծո՜ւմ հեռի յինէն, յար ի սուգ
Ո՞վ Տէր, մինչ ցե՞ր իմոյ աչացս արտասուք
Ինձեալ ողւով աղաղակեմ ամ՛ւր ժպիտ
Հրայրք, թախիծ լեսուն զիմ սիրտ անքթիթ
Իսկ զիմ որդի յերկինս առ քեզ է օժիտ։

Տէ՛ր սիրելանք, լե՛ր օժանդակ աղախնոյդ
Ի քեւ ցնծալ, արդահատիլ չնորհօք քոյդ
Կենցաղօդուտ արա՛ եւ զիս, միշտ անքոյթ
Ի՞նչ կամիս հառաչանացս կեալ անսիոյթ
Ներեա՛ ինձ Տէ՛ր, զի յոյժ կարօտ եմ զթոյդ։

ՓԱՌՔ ԻՄ

«Մահ խնացեալ անմահութիւն է» պատգամ
Աստուածային ներշնչութեան միանգամ

Նանիր զաչխարհ՝ թողուլ ցաւոց կայարան
Նախահրաման եղեւ առ մարդն Ադինեան

Ինոյն եւ ես անկեալ յուղի երկնատար
Կենաց ի կեանսս ընթանամ սրավար

Թադ ինձ տուաւ ի Սերովբէն Անեղին
Օրհնակից զոլ ընդ երկնայնոցն խմբին

Գործ աչխարհիս ունայնութիւն է բոլոր
Ամեն վայելք եւ ինդութիւնք թիւնաւոր

Թախիծն է միշտ արտասանման անդանօր
Լոկ կեանք լոկ փառք անմահութիւնք է բոլոր

Եկի ես ատ, ահա մնամ երկնաճեմ
Ատ Աստուծոյ եւ զուարթնոց եմ ընդ դէմ
Նման ծաղկի եւ սիրելւոց, որ ետն եմ։

Ա.Ռ.

ԷՋՆՈՒԹԵՓԵՑԼ

ՏԻՐՈՒՀԻ ՏԻՆԻՆ ԹՕԳԱԹԼԵԱՆ

Աշխարհիս վիշտերն ու դառնութիւններն բազմադիմի լինելով՝ երբ մարդս նոցա միոյն ենթարկի, իսկոյն կ'յուսահատի եւ մորմոքելով կ'տառապի, եւ համարեա՛ թէ ամէն պարագայից մէջ զինքը անմխիթար կ'տեսնէ, ասի մարդկային բնութեան տկար արդիւնքն է թեպետ. սակայն նոյնը յուսադրող առաքայներն ալ չեն պակսիր մեզմէ:

Երբ մէն մի ուշադրութիւն դարձնենք մեր սուրբ հարց գործոց եւ նոցա բազմաչարչար նահատակութեանցը՝ անշուշտ պիտի զտնենք նոցա մէջ մեր վըշտաց մխիթարութիւնը, մեր ցաւոց դարմանը եւ մեր ամէն տեսակ վիրաց սպեղանին. քանզի չ'կայ աշխարհիս վրայ տառապանք եւ նեղութիւնք որք նախնիք Ենթակայ եղած՝ համբերութեամբ եւ սիրով տարած չլինին:

Եւ ահա սոյն նպատակաւ ի յոյս կ'ընծայեմ դուցնաբեայ աշխատութիւնս, զոր Ձեր խպարապոյ ժամերուն ընթերցելով՝ սրբոց Վարդանանց եւ Գ.Եւոնդեանց նահատակութիւնքն, Ձեր վիշտերը չափաւորեք, եւ Ձեր ցաւերն բուժեք, որով կարող լինիք խնամելու Ձեր նորաբողբոջ զաւակունքն ի մխիթարութիւն եւ ի սփոփանս բարեծնունդ ԴԵՐԴԱՍՏԱՆԻՈՑԴ:

ՏԻԳՐԱՆ Գ. ՔԵՖԵՄԻՃԵԱՆ

1875 կ. Պոլիս յԻսկիւտար

ԴԻՒՑԱԶՆՈՒԹԻՒՆ Ք

ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

ՔՐԻՍՏՈՍԻ 435 թուականին Արշակունեաց ցեղին թագաւորութիւնը՝ Արտաշիր Գ. թագաւորին երիտասարդական մոլութեանց և զանազան տեսակ անկարգութեանց պատճառաւ վերջացաւ, նոյն ժամանակ Վռամ պարսից թագաւորը Վեհմիհրշապուհ անունով Պարսից մարզպան (գաւառակալ) մի յուղարկեց Հայաստան որ կառավարէ. թէպէտ Վեհմիհրշապուհոյ մարզպանութեան ժամանակը Հայաստանը խաղաղ և հանդիստ էր։

Սակայն երբ Վռամ Պարսից թագաւորն մեռնելով նորա որդին Յազկերտ Բ. յաջորդեց այն ժամանակ Հայաստանին հանդիստն ու խաղաղութիւնը բոլորովին տակն ու վրայ ըրաւ, որովհետև Յունաց դէմ պատերազմի երթալով և նոցա յաղթելով, և նաև ուրիշ կողմերն ալ ունեցած պատերազմներն յաջողութեամբ վերջացնելով՝ այն աստիճան հպարտացաւ որ, յանդգնեցաւ կրօնի դէմ ևս պատերազմ բանալ, և

Քրիստոնէութիւնն աշխարհիս երեսէն բոլորովին ջնջել կը մտածէր։

Յաղկերտին՝ այս խորհուրդն 'ի գործ դնելու յորդորողներուն գլխաւորը՝ Պարսից մոգերէն զատ՝ Միհրներսէհ Պարսից տէրութեան հազարապետն էր, որն որ արդէն 'ի վաղուց առիթ կը փնտռէր Քրիստոնէից դէմ հալածանք հանելու և զանոնք պարսից աղանդը դարձնելու. բայց Յունաց կայսրմէ երկնչելով իւր խորհուրդն 'ի գործ դնելու չէր համարձակեր, իսկ հիմա Պարսից՝ Յունաց վրայ ըրած յաղթութենէն համարձակութիւն առնելով, և նաև Սիւնեաց ցեղէն Վարազվաղան անունով՝ ուրացեալ նախարարէ մը գրգռուելով, զթագաւորը յորդորեց որ իւր իշխանութեան ներքև եղող Քրիստոնեաները պարսից աղանդը դարձնէ, որպէս զի ասով Աստուածներուն քեզի տուած այնչափ յաղթութեանց փոխարէն հաճոյական գործ մը ըրած լինիս, ասաւ։ Յաղկերտ անմիջապէս ամէն պարսիկ իշխաններուն ու մոգպետներուն հետ խորհուրդ արաւ թէ ի՞նչ եղանակաւ այս բանս սկսին ու կատարեն, և որոշուեցաւ որ թագաւորը Հոնաց դէմ պատերազմ բանայ. և բոլոր իւր իշխանութեան ներքև եղող Քրիստոնեաներէն ալ զօրք ժողոված՝ իւրեանց իշխաններովը

միատեղ պատերազմի տանի, որպէս զի իշխաններն ու զօրքը հեռանալով՝ մնացած ժողովուրդը կարող չըլլնի իւր հրամանին դէմ դնել։ Նուտ մը ամէն կողմ հրովարտակներ ուղարկուեցան, որ ամէն իշխան իւր զօրքն առած Պարսկաստան դայ, այս հրովարտակը Հայաստան ալ դալով՝ նախարարները զօրքերնին առին Յաղկերտին դացին, որոնց հետ Պարսից զօրքն ալ միացած՝ Հոնաց վերայ դացին, և երկու տարի շարունակ պատերազմեցան, բայց բան մը չկրցան ընել։ Պատերազմին վերջանալէն զկնի Յաղկերտ ամէն ազդաց զօրքերը տեղերնին ուղարկեց, և անոնցմէ ուրիշ զօրք բերել տուաւ այսպէս եօթը տարի շարունակեց. և եօթը տարուան միջոցին մէջ իւր քովն եղող քրիստոնեայ նախարարներուն՝ ստակ, պատիւ և իշխանութիւն խոստանալով՝ յորդորեց որ պարսից աղանդը դառնան։ Բայց տեսնելով որ նոքա ամենևին յանձն չեն առնուր, յայտնի հրաման հանեց որ իւր իշխանութեան ներքև եղող քրիստոնեայք հաւատքնին թողուն և արեղական ու կրակի երկրպագութիւն ընեն։ Բայց իւր քովը եղող քրիստոնեայ զօրքը նորէն Հոնաց դէմ պատերազմի տարաւ, զորոնք ճանապարհին շատ չարչարեց. թոշակնին քիչ տալով, պատուաւոր իշխանները

անարգելով, և զանոնք հեթանոսներուն առջևն անպատիւ ցուցնելով։ Պատերազմէն դառնալէն վերջը՝ թող չտուաւ որ նոքա իւրեանց երկիրը երթան. այլ սկսաւ նորէն զանազան տանջանքներով ստիպել որ հաւատքնին ուրանան։ Ս.տոմ Գնունի և Մանաճիհր Ռշտունի իշխանները Յաղկերտին արածները տեսնելով զօրքերնին առին և Հայաստան փախան, բայց Պարսից զօրքն նոցա ետևէն հասաւ ու զամենը ջարդեց, որոնք Քրիստոսի սիրոյն համար առանց դէմ դնելու իրենք զիրենք Պարսից ձեռքը տուին ու մարտիրոս եղան։

Յաղկերտ Հայոց նախարարները Պարսկաստան արդիլելէն զատ՝ Դենշապուհ Պարսիկ իշխանը Հայաստան ուղարկեց. որպէս զի իւր իշխաններէն զրկուած ազգն ալ իւր կամայը խոնարհեցնելու աշխատի։ Եկաւ Դենշապուհ դըրսէն խաղաղութիւն ցուցնելով կամաց կամաց սկսաւ Հայաստանին ներքին կապերը քակել, մնացած նախարարներուն մէջ խռովութիւն ձգեց եկեղեցիներու վրայ հարկ դրաւ, կրօնաւորները ցրուեց. հարկերը կրկնապատիկ շատցուց, որպէս զի ասոնցմով Հայաստան տկարացնէ։ Բայց երբ որ այս բաներս Հայերը իւրեանց կրօնէն շեղելու բնաւ օգուտ մը չբրին, մոգպետին խոր-

հուրդովը Միհրներսէհ նոցա գլխաւորներուն մի նամակ գրեց. որուն մէջ նախ Պարսից աղանդը մեկնելէ զկնի, Քրիստոնէական Սուրբ կրօնի խորհուրդներն իբրև սուտ և անպիտան բաներ կը ցուցնէր, և հրամայեց որ կամ այս նամակին ամէն խօսքերուն մի առ մի պատասխան տան, և կամ ելնեն պարսից դուռը դան։

Ս. Յովսէփ կաթուղիկոսն այս նամակն առածին պէս, Հայաստանին եպիսկոպոսներէն 17 երևելիները, և շատ ալ հոգելից քահանաներ Ս.ռատաշատ քաղաքը ժողվեց և նոցա հետ խորհուրդ ընելով նախարարաց հաւանութեամբը Միհրներսէհին զօրաւոր պատասխան մը գրեց, որուն մէջ պարսից աղանդին ստութիւնն և քրիստոնէական հաւատքին սուրբ և ճշմարիտ լինելը յայտնի և համարձակ ցոյց տուաւ, և նամակն հետևեալ խօսքերով վերջացուց։

«Ս.յս սուրբ հաւատքին վրայ մենք ամենքնիս ալ, մեծէն մինչև փոքրը հաստատուն կեցած ենք, և պատրաստ ենք նաև մեր կեանքն ալ տալու»։

Ս.յս պատասխանն երբ որ Յաղկերտին և բոլոր պարսից իշխաններուն առջևը կարդացուեցաւ, թէպէտ և շատերը Հայոց համարձակութեանն և աներկիւղ իւրեանց հաւատքը պա-

պանելնուն վրայ զարմացան, բայց թագաւորը սաստիկ կատաղեցաւ, և մոգպետին խորհրդովը Հայ Նախարարներուն երևելիներն իրեն կանչեց, որոնք էին Վասակ Սիւնեաց իշխանն, որն որ Վեհմիհրշապուհին տեղ Հայոց մարզպան դրուած էր, Ներշապուհ Արծրունի, Արտակ Ռշտունի, Գագիկոյ Խոռխոռունի, Վարդան Մամիկոնեան Ս. Սահակին թոռը՝ Հայոց սպարապետը, Արտակ Մոկացի, Մանէճ Ապահունի Վահան Ամատունի, Գիտ Վահեւունի և Եմաւոն Անձևացի։

Սոքա թէպէտ Յազկերտին միտքը գիտէին, բայց որովհետև չատերնուն ազգականները Պարսկաստան նեղութեան մէջ էին, յուսալով որ իրեանց երթալովը կրնան զանոնք ազատել, ուստի ելան դացին, ճամբայ ելնելէն յառաջ Ս. Յովսէփ կաթուղիկոսին հաւատքներնուն վրայ հաստատուն կենալու խոստում տուին։

Յազկերտ նոցա սովորական ընդունելութիւնը (*) չընելէն 'ի զատ, նոցա հետ յանցաւորի պէս վարուեցաւ, և հրամայեց որ երկրորդ օրն իրեն ներկայանան։

Նախարարներն որոշուած ժամանակին պարսից իշխաններուն ու մոգերուն հետ միասին թագաւորին առջևը դացին, որն որ նոցա հետ բարկութեամբ խօսելով՝ ըսաւ, «Եթէ վաղը ինձ հետ արդիական երկրպագութիւն չէք ըներ, ամենքնիդ ալ սաստիկ տանջանքներու կը մատնեմ, և ձեր երկիրը անհամար զօրք ուղարկելով՝ ընտանիքնիդ և բոլոր ազգերնիդ կը ջնջեմ»։

Նոքա իւրեանց մինչև նոյն ժամանակն ըրած հաւատարիմ ծառայութիւնները Յազկերտին առջևը դնելով՝ չանացին նորա բարկութիւնն իջեցնել, բայց երբ տեսան որ զանի բնաւ չիլսէր. իրենք ալ բացայայտ ասացին որ «Մենք մեր Ս. հաւատքը ամենեւին թող չենք տար, ուստի ինչ տանջանք որ կուզես տուր մեզ։ Ս.յս պատասխանին վրայ Յազկերտ սաստիկ բարկութեամբ բորբոքած, հրաման տուաւ որ ամէն Հայ Նախարարները նախատանօք իւր առջեւէն մէկդի տանին. դահճապետին ալ հրամայեց որ զանոնք զգուշութեամբ բանտարկուածի պէս իւրեանց բնակարաններուն մէջ պահէ։ Նախարարները շատ չանացին, և պարսիկ իշխաններուն շատ սակ տուին որ կարող լինին

(*) Յառաջագոյն սովորութիւն էր որ, երբ Հայոց իշխաններէն մէկը գործքի մը համար պարսկաստան կերթար, պարսից թագաւորն նորա դիմացը մարդ կուղարկեր, թէ Հայաստանին եւ թէ իրեն ինչպէս լինելը կը հարցնէր. նաեւ նորա այն տեղ դալուն համար շնորհակալ կլինէր եւ յառաջագոյն արած ծառայութեանցը համար իրեն գովութիւն կուտար։

ազատիլ ու տեղերին երթալ. բայց անոնցմէ օգնութիւն մը չգտնելով՝ իրենք զիրենք Աստուծոյ յանձնեցին և նորա օգնութեանն ապաւինեցան։

Յաղկերտ՝ նախարարները պարսկաստան արդիլելով՝ զօրք կը պատրաստէր որ զանոնք հեռու տեղեր քշէ, և Հայաստանի սպառնացած չարիքներն ի գործ դնելու սկսի։

Պարսիկ իշխաններէն մին՝ որն որ ծածուկ Քրիստոնեայ էր, այս բանս լսելուն պէս՝ եկաւ նախարարներուն պատմեց, և նոցա խորհուրդ տուաւ որ առ երեսս Թագաւորին կամքը կատարեն, մինչև որ պարսկաստանէն ազատին և իւրեանց երկիրը երթան. և այնուհետև նորէն համարձակ սկսին իւրեանց կրօնը պաշտել, որպէս զի ասով՝ ըսաւ, ձեր ազգն և ընտանիքն ուրացութենէ ազատէք, որոնք առանց իշխանի մնացած, չեն կրնար Թագաւորին դէմ դնել, և ի հարկէ պարսից աղանդը կընդունին։

Ասոր վրայ բոլոր Հայ նախարարները Ժողովեցան և Վրաց և Աղուանից իշխաններն ալ կանչելով՝ խորհուրդ ըրին և որոշեցին որ առ երեսս Թագաւորին կամքը կատարեն, մինչև որ իւրեանց երկիրը երթան, Վարդան Մամիկոնեան սպարապետն ալ՝ որ ի սկզբան այս ուրա-

ցութեան սատանիկ դէմ կը դնէր. շատ սատպելով և Աւետարանի վերայ երդում ընելով որ՝ հաւատքնին հաստատուն կը պահեն և միշտ իրեն հետ միաբան կը մնան և իրեն կը հնազանդին. վերջապէս իւրեանց հետ միաբանեցան և անմիջապէս Թագաւորին ծանուցին Թէ՝ «պատրաստեմք քու կամքդ կատարելու»։ Յաղկերտ արտաքոյ կարգի ուրախացած՝ շուտ մը ամէն իշխանաց իւրեանց առաջին պատիւը տուաւ, և ամէն մեկուն առատ պարգևներ ալ շնորհեց. և հետերնին գունդ մը զօրք և 700 հարիւրէն ալ աւելի մոգք ու մէկ մոգպետ դրած՝ Հայաստան ուղարկեց, որպէս զի պարսից աղանդը Հայոց սովորեցնեն, պատուէր տուաւ որ ամէն եկեղեցիները կործանեն և կրօնակատուններ չմնան, և Քրիստոնէութեան յիշատակը Հայաստանին մէջէն բոլորովին չնչեն բայց Գուգարաց Աշուշայ եպիսկոպոսն և Վասակ Սիւնեաց իշխանին Բաբիկ և Ամիրներսեհ որդիները պատանդի պէս իր քովը պահեց որպէս զի չլինի Թէ նախարարներն իւրեանց խօսքը չի պահեն։

Իսկ նախարարներուն քովը եղող քահանաներն նոցա ուրացութեան վերայ սատանիկ արտասուած և միանգամայն արդար բարկութեամբ

բորբոքած՝ անոնցմէ բաժնուեցան, և մէջերնէն մէկն իրենցմէ յառաջ Հայաստան ուղարկելով՝ զելութիւնը իմացուցին։ Հայաստանին եպիս-կոպոսներն ու քահանաները երբ նախարարաց ուրացութիւնը լսեցին՝ խորհուրդ ըրին և որոշեցին որ ամենայն զօրութեամբ նոցա դէմ դըրնեն և թող չ'տան որ Հայաստան մտնեն. ամենեին առանց խնայելու ո՛չ աղդականի, ո՛չ եղբօր, ո՛չ հօր, ուստի այս մտքով արք և կանայք զէնք առին, զրահ հագան և պատրաստուեցան։

Իսկ նախարարները պարսից զօրքին ու մոդերուն հետ նոյեմբեր ամսոյն մէջ Հայաստան հասնելով՝ Սնդղ գիւղը բանակեցան և ամսի մը չափ հանդիստ կենալէն վերջը, կիրակի օր մը մոդպետը մոդերուն հետ եկեղեցի դնաց և կուղէր կործանել։ Ս. Ղէոնդ քահանան՝ որն որ ուրիշ շատ եկեղեցականներով՝ նոյն եկեղեցւոյն մէջ պաշտօն կը կատարէր, մոդերուն դէմ ելաւ և թող չտուաւ. ժողովուրդն ալ հաստ դաւազաններով նոցա վերայ յարձակեցան և լաւ մը ծեծելով և դլուխնին պատռելով՝ արտաքսեցին։ Սորա վերայ մոդպետը զարհուրեցաւ. և Հայոց հաւատքին հաստատութեան փորձն աչքովը տեսնելով՝ զանոնք մոլորեցնելէն

բոլորովին յոյսը կտրեց. ուստի Վասակ Մարզպանն իրեն կանչելով՝ սաստիկ յանդիմանութիւն մը տալէն վերջն, ըսաւ, Եթէ դու ալ մեր կրօնն ընդունիլ չես ուզեր, բացայայտ ասէ, ես մեծ մոդպետին ու Միհրներսեհին կը դրեմ որ թագաւորը համոզեն՝ զէեղ ձեր հաւատքին մէջ թողնելու. որպէս զի ձեր երկիրը չ'ապականի և հարկերը չ'պակսին։

Բայց անօրէն Վասակն՝ որ փառասիրութեան և իւր Պարսկաստան մնացած որդւոյը սիրոյն համար հաւատքը սրտանց ուրացած էր. մոդպետը շատ խօսքերով հանդարտեցնելու ջանաց, և Սիւնեաց նահանգէն շատ զօրք ժողովելով՝ իւր բանակը զօրացուց. և որպէս զի կարող լինի թագաւորին հրամանը բռնի կատարել տալ. սկսաւ ոմանց դրամով և ոմանց ալ պատիւներ ու պարգեւներ տալով իւր կողմը շահիլ. և իւր չարագոյն նպատակին շուտով հասնելու համար նախարարաց տները մոդեր բաժանեց։

Եպիսկոպոսները երբոր Վասակին արած ազդակործան գործքերը տեսան, ճարտարութեամբ մը Հայոց բանակին ուրացեալներն և հաւատքնին պահողներն իրարմէ բաժանեցին. յեռոյ խորհուրդի ժողովեցան. և Վարդան

Սպարապետն բոլոր ուխտապահ իշխաններով կանչեցին և ասացին. «Թէ որ Վասակին ապրածներուն դուք ալ հաւանութիւն ունիք, նախ զմեզ սպաներեցէք և յետոյ ուզածնիդ արէք. իսկ եթէ հաւանութիւն չունիք, շուտով նորա չարութեանց վրէժն առէք»։

Նախարարներն միաբերան Աստուած վկայ կանչելով հաստատեցին որ իրենք նորա արածներուն ամենևին հաւանութիւն չունին. և անմիջապէս պատրաստուեցան որ ուրացեալներուն վերայ երթան և նոցա արած չարութիւններուն վերջ տան։ Մէջերնին Զանգազան անունով սեպուհ մը իրենց հետ միաբանիլ չուզելուն համար բռնեցին քարկոծեցին, որն որ ամենուն վրայ մեծ ազդեցութիւն արաւ։ Սակէ վերջն երեք դունդ բաժնուած. մէկը դէպ 'ի Արևելք. միւսը Արևմտեան կողմն, իսկ երրորդը դէպ 'ի Հիւսիս քաշեց. որոնք Վասակին բանակը մէջերնին առին ու սաստիկ ջարդեցին. շատ երեւելի իշխաններ ալ ձերբակալելով բերդերու մէջ արգիլեցին. նոյնպէս Վասակն ալ բռնեցին, բայց զանի եպիսկոպոսաց ոտքն իյնալով երդմամբ խոստացաւ որ ա՛լ այնուհետև հաւատքի դէմ չ'գինիր և քրիստոնէութիւնը հաստատուն կը պահէ. այս խոստմանը համար ազատ թող

տուին Վասակին դունդը ցրուելէն վերջը. նախարարներուն զօրքը պարսից բռնած Հայաստանի բերդերուն վրայ գացին, և զանոնք առնելով՝ մէջինները սրէ անցուցին. ամէն կողմի մոգերուն կէս մը ջարդեցին, կէս մը փախուցին և կրակատուները կործանեցին. և այս ամէն պատերազմներու մէջ Աստուած ալ իւր օգնութիւնը Հայոց դնդին վերայ յայտնի կը ցուցնէր. մինչև անգամ մը երկու թշնամեաց բերդ նոցա առջևը յանկարծ կործանեց. որով այն կողմի կրակապաշտ բնակիչները՝ իւրեանց ձեռամբ կրակատուները այրեցին և քրիստոնեայ եղան։

Հայաստան իւր բարեպաշտ իշխաններուն քաջութեամբ կռապաշտութեան դէմ յաղթութիւններ կատարած ժամանակ, Հոնաց կողմն եղող պարսից զօրքն իւրեանց Սեբուխտ զօրապետին հետ Աղուանից երկիրն արշաւեցին, և սկսան եկեղեցիները կործանել, և շատ մարդիկ բռնութեամբ իւրեանց աղանդը դարձուցին։ Աղուաններն՝ որոնք տկար ազգ մը լինելով՝ չէին կրնար Պարսից դէմ դնել. անմիջապէս իւրեանց տէրութեան հաղարապետն և եպիսկոպոս մը Հայաստան ուղարկեցին և եղելութիւնը իմացուցին։ Հայոց իշխաններն այս բա-

ներս ըսելով՝ նոցա խորհուրդ տուին որ քիչ մը ժամանակ Պարսիկները խաղցնեն մինչև որ իրենք հնարք մը գտնեն՝ և մէջերնին ժողովք ընելով՝ Գնունեաց Ատամ իշխանը՝ Ս. Յովսէփ կաթուղիկոսին և բոլոր Հայոց եպիսկոպոսներուն և իշխաններուն կողմանէ գրուած նամակով մը Թէոդոս կայսեր ուղարկեցին. որուն մէջ Պարսից չարութիւններն և իւրեանց մինչև նոյն ժամանակն նոցա դէմ ըրածները պատմելէն զկնի, կ'աղաչէին որ ինքն ալ իւրեանց օգնէ. և թող չ'տայ որ եկեղեցիները հեթանոսներէն անարգուին և քրիստոնէութիւնը ջնջուի: Ա.յս նամակին ամէն Հայ իշխանները՝ նաև Վասակ Սիւնեաց իշխանն ալ իրենց կնիքը կոխած էին:

Թէոդոս Կայսրը՝ Հայոց նամակը կարդալով՝ յօժարեցաւ նոցա օգնութիւն ուղարկել. բայց դեռ պատրաստութիւն տեսած ժամանակն՝ իւր կենաց վերջը հասաւ, որով աւերեցաւ: Վասն զի իւր յաջորդը Մարկիանոս՝ իւր զօրապետներուն խորհուրդովը Պարսից հետ դաշինք դրաւ և Հայոց օգնելէն բոլորովին ետ կեցաւ:

Հայերը թէպէտ և այս կողմանէ ունեցած յոյսերնին ալ 'ի դերև ելաւ. ամենևին չ'լքան, այլ Աստուծոյ օգնութեանն ապաւինած իրենց

զօրքն երեք դունդ բաժանելով՝ առաջինը Ներշապուհ Արծրունի իշխանին յանձնեցին և Ատրպատականի կողմը ուղարկեցին որ Հայաստանին սահմանը պահպանէ. և պարսից ներս յարձակիլն արդիլէ. երկրորդ դունդը Վարդան սպարապետին հետ Աղուանք յարձակող Պարսից վերայ ուղարկեցին. իսկ երրորդը Վասակ Սիւնիին ձեռքը յանձնեցին: Վասակ՝ որն որ բոլոր սրտով Պարսից աղանդն ընդունած էր, թէպէտ և երեսանց ինքզինքը քրիստոնեայ կը ցուցնէր. իւր մտքին համաձայն նախարարներն իւր քովը պահեց. և անմիջապէս Պարսից զօրապետին մարդ ուղարկելով՝ ըսաւ, թէ Ա.հաւասիկ Հայոց դունդն երեքի բաժանեցի. մէկն իմ իշխանութեանս ներքև է. որուն թող չեմ տար ձեզի դէմ ելլել. երկրորդն Ատրպատականին սահմանը հեռացուցի. իսկ երրորդը՝ զոր որ Վարդան հետն առաւ. քու վրադ, փոքրիկ և սակաւաթիւ դունդ մ'է, ամենևին մի՛ վախնար. դիմացն ելլ և անտարակոյս կը յաղթես:

Սերուխտ Պարսից զօրապետը՝ Վասակին այս խօսքերէն քաջալերուած՝ զօրքն առաւ և Կուր գետէն այս կողմ անցնելով՝ մինչև Խաղխաղ քաղքին առջևը յառաջացաւ. այն տեղ

Վարդանին զօրացը պատահելով՝ նոցա դիմացը ճակատեցաւ։ Վարդան Սպարապետն ալ իւր զօրքը թշնամւոյն դիմացը շարեց. բանակին ալ թեւն Սրշաւիր Կամսարականին տուաւ. և նորա օգնական Դիմաքսեան Մուշեղուհը, ձախ թեւին վերայ դրաւ Խորէն Խոռխոռունին. որուն օգնական տուաւ Հմայեակ Դիմաքսեանն. իսկ ինքը բանակին կեդրոնը կեցաւ։ Զարնուելու նշանը տրուածին պէս՝ Հայերը սաստիկ քաջութեամբ թշնամոյն վերայ յարձակեցան, շատերը ջարդեցին. մնացածը ցրուեցին և մինչև գետը հալածելով՝ նոցա մեծ մասը ջրին մղեցին ու խեղդեցին։ Սմենէն աւելի Սրշաւիր Կամսարականն և նորա օգնական Մուշեղուհն այս պատերազմին մէջ քաջութեամբ կռուեցան. որոնք թշնամիներէն շատ մարդ ձեռքոնքին սպանեցին. բայց զանոնք հալածելու ժամանակին ճախճախուտ տեղ մը պատահելով՝ ձիերնին տղմին մէջ մնան, և չկարողացան յառաջ երթալ, նոյն միջոցին թշնամիք վրանին հասնելով, Մուշեղուհը զարկին սպանեցին.(*) իսկ Սրշա-

(*) Եղիշէ ժամանակակից պատմիչը որ շատ բաներ ականատես եղած է, կ'պատմէ թէ՝ այս ամէն պատերազմաց մէջ Հայոց կողմէն Մուշեղուհէն'է զատ ամենեւին մի մարդ չը մեռաւ։

ուիր ձիէն վար ցատկելով՝ նոցա վերայ յարձակեցաւ և շատերը սպաննեց. որոնց մէջ նաեւ Վուրկ քաջ իշխանը՝ Լինաց թագաւորին եղբայրն, և մնացածը փախուց։ Նոյն ժամանակը Վարդան սպարապետը տեսաւ որ քանի մը պարսիկ իշխաններ գետին վրայէն նաւով կը փախչին, անմիջապէս Սրշաւիր Կամսարականն եւ տեւէն ուղարկեց, որ գնաց գետեղերքէն ամէն նաւավարներն և իշխանները զարկաւ սպաննեց։ Պարսիկներն այսպէս չարաչար յաղթուելով՝ կենդանի մնացողներն ալ անտառներու մէջ և լեռներու վրայ փախան, որոնց ամէնն ալ Հայոց զօրքերը բռնեցին և սպաննեցին, այնպէս որ նոցա գունդը բոլորովին ջնջուեցաւ, և հազիւ թէ մէկ հոգի ձիով գետէն անցնելով՝ կարողացաւ իրենց բուն բանակն երթալ և իրենց պատահած դժբաղդութեան գոյժը տալ։

Սակէ վերջը Հայոց զօրքը Պարսից բանակին հարուստ աւարները ժողովեցին և Կուր գետէն անդին անցնելով՝ Սղուանից ամէն բերդերը՝ զորոնք Պարսիկները բռնած էին պատերազմաւ առին. բոլոր մոգերը ջարդեցին և կրակատուններնը կործանեցին։ Սղուանից նախարարներն՝ որոնք ամուր լեռներու վրայ փախած էին, Հայոց զօրքին ըրած յաղթութիւն-

ները տանելով՝ եկան նոցա հետ միացան և միաբան Ճորայ պահակը(*) գացին կործանեցին, և Հոնաց և նոցա սահմանակից ազգերուն հետ դաշինք դրին որ իրենք ալ Պարսից դեմ ելնեն և Հայոց օգնեն։

Վասակ Սիւնեաց իշխանը Վարդանին Սղուանից երկիրն ըրած յաղթութեան վերայ ամենևին տեղեկութիւն չունենալով, սկսաւ նորէն իր սրտին մէջ ծածկուած չարութիւնը յայտնել և Հայաստան տակն ու վրայ ընել։ Եատ ամուր բերդեր կործանեց, գեղերն այրեց, ուխտապահ նախարարաց ընտանիքը բռնեց իր երկրին (Սիւնեաց) բերդերուն մէջ դրաւ։ Այս ամէն գոյժը Հայերն անմիջապէս Վարդան Սպարապետին հասցուցին և նորա ծանուցին որ Վասակին հետ շատ ուրիշ նախարարներ ալ միաբանած են և եկեղեցիներն անգամ կը քանդեն. իսկ Ատրպատականի կողմն եղող գօրքն ուխտապահներուն հետ միաբան է։

Վարդան առանց խռովելու շուտ մը գօրքը

(*) Ախ Կովկաս լերանց կիրճերուն մէջ շինուած սահմանակ ամուր բերդ մ՝ էր՝ որ պարսից թագաւորը շինել տուած էր, Հնոց պարսկաստան յարձակիլն արգիլելու համար։

ժողովեց ու ճամբայ ելաւ և երկու օրուան մէջ Հայաստան հասաւ. այն ժամանակն՝ որ Վասակ Հայոց դէմ դիմեն Սղուանից երկիրն ըրածներուն լուրն առած լինելով սաստիկ չփոթութեան մէջ ինկած էր, որ երբ Վարդանին գալն ալ լսեց, ամէն բռնած գերիներն և յափշտակած հարստութիւնները թողնելով փիշերանց փախաւ, իր երկիրը դնաց։ Բայց որովհետև ձմեռը հասած էր և Վարդան բաւական պաշար չունենալով չէր կարող բոլոր գօրքը միատեղ պահել, ուստի նոցա մեծ մասը տեղերնին ուղարկեց. և հրամայեց որ դարձեան նորէն իր քովը ժողովին։ Իսկ քովը պահած գօրքին շատ դնդեր Սիւնեաց երկիրը ուղարկեց, որոնք շատ տեղեր ասպատակեցին և ուրացեալները այնչափ նեղը ձգեցին՝ որ ուրիշ կերակուր չը կրնալով դանել, սատկած իշու և ձիու միս սկսան ուտել։ Եպիսկոպոսներն երբոր այս խեղճութիւնները տեսան, ժողովրդեան պատուէր տուին որ բոլոր Քաղդէայ ամիսը պահք պահեն և Աստուծոյ աղաչեն որ իրենց ողորմի և օգնէ։ Եւ որպէս զի Պարսից թագաւորին սիրան ալ շարժեն որ ըրած չարիքներէն ետ կենայ՝ գերի բռնուած պարսիկ մը առջևնին կանչեցին և եղած դիւանները ու Վասակին ըրածները՝ նորա

մի առ մի պատմելով՝ Պարսկաստան ուղարկեցին որ երթայ Ցաղկերտին առջևը դնէ։

Ցաղկերտ երբ որ այս մարդէն Հայաստանին խեղճ վիճակն իմացաւ, առերեսս փոքր ինչ փոխուիլ ցուցուց, և անմիջապէս ամէն շարչարանքի մէջ եղող քրիստոնեայներն ազատեց և հրաման տուաւ որ՝ իւրեանց կրօնը համարձակ պաշտեն. քահանաներուն պատուէր ուղարկեց որ եկեղեցիներուն մէջ իւրեանց պաշտօնն անխափան կատարեն։

Հայաստան ալ հրովարտակ մը ուղարկեց և ամենուն ընդհանուր թողութիւն և քրիստոնէութեան կատարեալ ազատութիւն տուաւ։ Այս ամէն բաներուն վախճանը Հայերը հանդարտեցնել էր, որպէս զի այնուհետև կարող լինի դիւրութեամբ իւր կամքը կատարել։ Բայց երբ տեսաւ որ այսպիսի խաբէական խոստմունքներով ու շնորհքներով նոքա չխաբուեցան և հաստատուն կեցան, այն ժամանակ վերջին փորձի ձեռնամուխ եղաւ. այսինքն զինու զօրութեամբ ուզեց զՀայերն նուաճել, և իւր կամքը բռնի կատարել տալ. ուստի այս նպատակաւ մի մեծ բանակ և շատ փղեր պատրաստել տուաւ՝ և նոցա վրայ Միհրներսեհ իշխանը զօրապետ դնելով Հայաստան ուղարկեց։

Եկաւ Միհրներսեհ Փայտակարան քաղաքը բանակը դրաւ, և զՎասակ իրեն կանչելով բոլոր գործքն նորա յանձնեց։ Այս անօրէն իշխանն անմիջապէս նախարարներուն մէջէն իրեն կողմն եղողներն իւրեանց զօրքովը քովը ժողովեց, որոց գլխաւորներն էին, Տիրոց Բագրատունի, Սրտակ Ռշտունի, Գագիկոյ Խոռխոռունի, Գիտ Վահեհունի, Մանէճ Ամատունի, Սրտէն Գաբեղեան, Ներսեհ Ուրծայի, Ընդիւղ Սկէացի, Վարազշապուհ Պալունի և ասոնցմէ զատ շատ ուրիշ իշխաններ ու սպարապետներ։ Բոլոր Սիւնեաց նահանգի բնակիչները Պարսից աղանդը դարձուց և անոնցմէ մեծ դունդ ժողովեց։ Այս բաներս ընելէն վերջը՝ ամէն կողմ նամակներ ուղարկեց և ստուգեամբ ամենուն հրատարակեց, որ Թագաւորը քրիստոնէութեան ազատութիւն շնորհեց. քանի մը չար և անպիտան քահանաներու ձեռքով ալ միամիտ ժողովուրդը խաբեց։ Եւ որպէս զի Հոնք կարող չըլլան Հայոց օգնել, նոցա սահմանն անհամար Պարսիկ զօրքերէն ուղարկել տուաւ, Միհրներսեհին ալ Վարդանին զօրութեանը վերայ ճիշդ տեղեկութիւն տուաւ, որն որ ամէն բան իմանալէն զինի՝ իւր զօրքը Մուշկան Նիսալաւուրտ իշխանին յանձնելով

Հայոց վերայ ուղարկեց։

Իսկ Վարդան Ս. զօրապետը՝ թէպէտև թշնամւոյն ահագին զօրութիւնն և իւր տկարութիւնն կը տեսնէր, բայց բոլոր յոյսն Աստուծոյ վերայ դրած լինելով՝ պատրաստուեցաւ որ նոցա դէմն ելնէ։

Ուստի իրեն հետ միաբանած նախարարներն և զօրքը, որոնց թիւը 66000 էր, Ս. Ստաշատ քաղաքը ժողովեց, և ուրացեալ նախարարներուն փոխարէն՝ ամէն մեկուն տղաքանները էն նոցա տեղերուն վերայ նոր իշխաններ դրաւ, և անկէ յետոյ՝ առաջ անցնելով՝ Ս. Ստաղու գաշտին վերայ բանակը կեցուց։

Այնտեղ եկան նաև Ս. Յովսէփ կաթուղիկոսն և Ս. Ղևոնդ քահանան ուրիշ շատ քահանաներով և եկեղեցականներով՝ որպէս զի իրենք ալ այս հոգևոր պատերազմին զորձակից լինին։ Ս. Վարդան Սպարապետը զօրքը կարգի գնելէն յետոյ՝ նոցա յորդորական խօսք մը խօսեցաւ, որ Աստուծոյ սիրոյն և իրենց հաւատքին պաշտպանութեան համար քաջութեամբ պատերազմին, և նոցա առատ ռոճիկ բաժնելով կ'ուրախացնէր։

Նոյն ժամանակը յանկարծ լուր հասաւ թէ Պարսից զօրքը Հէր և Զարևանդ գաւառները

հասեր բանակնին դրեր են. և անոնցմէ շատ ասպատակ գնդեր ապտին անդին կերթան աւար կառնուն և կապականեն։ Վարդան անմիջապէս Առանձար Սմատունի քաջ սեպուհը 2000 զօրքով ասպատակներուն վերայ ուղարկեց, որ և գնաց քաջութեամբ զարկաւ. անոնցմէ շատերը ջարդեց. և մնացածն իրենց բուն բանակն փախուց և ինքը յաղթանակաւոր դարձաւ։ Այս փոքր յաղթութեան վերայ Հայոց զօրքն աւելի ևս հոգի առին։ արիացան և աներկիւղ պատերազմելու պատրաստուեցան։

Միաբանեալ նախարարաց տեսած պատրաստութիւնը՝ Վասակին և Պարսից զօրապետին սիրտը երկիւղ ձգեց. նորա համար սկսան նորէն խաբէական խոստմունքներու ձեռնարկել, որպէս զի զանոնք իրարմէ բաժանեն և դիւրաւ յաղթեն. բայց երբ տեսան թէ նախարարներն իրենց խօսքերուն չեն լսեր, այն ժամանակ իրենք ալ բոլոր զօրութիւններն 'ի մի ամփոփելով նոցա վերայ քալեցին։ Պատերազմին առաջի իրիկունը Ս. Ղևոնդ՝ Ս. Յովսէփ Կաթուղիկոսին հրամանաւը՝ զօրաց հոգեւոր ճառ մը խօսեցաւ, և հետևեալ առաւօտուն պատարագ մատուցանելով հաղորդուեցան և չ'մկրտուածներն ալ մկրտուեցան։ Այնուհետև Սպարապետը նա-

խարարաց հետ խորհուրդ ընելով զօրքը չորս դնդի բաժնեց և Տղմուտ գետին քով թշնամւոյն դէմ ճակատեցուց։ Առաջին դնդին վերայ զօրապետ դրաւ Ներշապուհ Արծրունին և նորա օգնական Մոկաց իշխանն և Միհրշապուհ Մարդպետը. և ճակատին կեդրոնը կեցուց. երկրորդ դունդն աջ թեւը դրաւ, որուն զօրապետութիւնը Խորէն Խոռխոռունիին տուաւ. և նորա օգնական Ներսեհ Քաջ բիւրունին, երրորդ դունդն ալ Թաթուլ Վանանդացւոյն և նորա օգնական Տաճատ Գնթունին հրամանին ներքև, պահեստի համար ճակատին ետեւը կեցուց, իսկ ինքն Արշաւիր Կամսարականին և Փափաք Առաւեղենեան իշխաններուն և իւր Համազասպեան եղբօրը հետ՝ չորրորդ գումարտակով ձախ թեւը կեցաւ. որուն դիմացն ուրացեալ Սիւնեաց դունդը կեցած էր, և հրաման տուաւ որ զարնուելու սկսին։ Հայոց զօրքը սաստիկ քաջութեամբ իրենցմէ չորեքպատիկ աւելի թշնամւոյն և կատաղի փղերուն վրայ յարձակեցան. և Տղմուտ գետէն անդին անցնելով՝ սկսան զանոնք ջարդել։ Նոյն ժամանակը Վարդան Սպարապետը տեսաւ որ ձախ թեւը տկարանալու սկսեր է. անմիջապէս բոլոր զօրութեամբ նոյն թեւին հետ պատերազմող

Պարսից աջ թեւին վրայ յարձակեցաւ, և զանիկայ խորտակելով՝ փղերուն ետեւը փախուց, ասոր վրայ ճակատին կարգը շփոթեցաւ և շատերն սկսան ցրուիլ ու փախչիլ։ Մուշկան Նիսալաւուրտ իւր բանակին քայքայիլը տեսնելով՝ իւր քովն եղող պահեստի դնդերն ու փիղերն առած Վարդանին վերայ յարձակեցաւ, և զանիկայ ամէն կողմանէ պաշարեց. ուր Ս. Վարդան երկայն ատեն քաջութեամբ բիւրաւոր թշնամւոյն դէմ պատերազմելէն վերջը զարնուեցաւ ինկաւ, և մարտիրոսութեան պսակն ընդունեցաւ։ Իսկ միւս դնդերը մինչև արևուն մանելը պատերազմեցան և յաղթութիւնն անորոշ մնաց. բայց որովհետև սպարապետին կորնցուցած էին, և չկար մէկն որ դլուխ լինէր և զանոնք կառավարէր, ուստի դիշեր եղածին պէս սկսան ասդին անդին ցրուիլ, և անառիկ բերդերու և ամուր գաւառներու մէջ մտան ամրացան։

Այս պատերազմին մէջ նահատակող իշխաններն են՝ Վարդան Մամիկոնեան սպարապետէն զատ, Խորէն Խոռխոռունի, Արտակ, Պալունի, Տաճատ Գնթունի, Հմայեակ Դիմաքսեան, Ներսեհ Քաջբերունի, Վահան Գնունի, Սրսէն Ընծայեցի, Գարեգին Սրուանցդեան և

իր երկու եղբայրներն, որ նահատակուողաց թիւն է ընդ ամէնը 1036 հոգի։ Իսկ Պարսից կողմէն միայն պատերազմին մէջ 3544 հոգի մեռան, որոնցմէ 9 հոգի մեծ իշխաններ էին։

Մուշկան՝ պատերազմին այսպէս վախճան ունենալուն վրայ շատ տրամեցաւ և չէր գիտեր թէ ի՞նչ ընէ, բայց Վասակ զինքը քաջալերելով խորհուրդ տուաւ որ Ժողովուրդը՝ քրիստոնէութեան աղատութիւն խոստանալով խաբէ և նուաճէ. իսկ բերդերը պատերազմաւ առնու և մէջի զօրքերը հնազանդեցնէ։ Պարսիկ զօրապետն այս խորհրդեան անսաց, և զՎասակ հետն առած՝ նախ ամուր բերդի մը վրայ գընաց, ուր որ գունդ մը Հայ զօրք և քահանաներ ապաւինած էին, և սաստիկ պատերազմեցաւ. մէջիններն իրենք զիրենք լաւ պաշտպանելով՝ բան մը չկրցաւ ընել, ուստի նորէն սուտ խոստումներ սկսաւ ընել։ Ա.ին ժամանակ Բակ անունով մէկը պարսպին վրայ ելաւ և Վասակին ըրած խաբէութիւններն և ինքանէրն երևսը զարնելով՝ նոյն գիշերը 700 հոգի հետն առած ելաւ գնաց։ Իսկ ներսը մնացողներուն կերակուրը հատնելով անճնատուր եղան, որոնցմէ Վասակ 213 հոգի անմիջապէս սպաննել տուաւ։ Բայց Ս. Յովսէփ կաթուղիկոսն և Ս.

Ղևոնդ՝ ուրիշ քանի մը եկեղեցականներու հետ՝ Վասակին ըրածներուն դէմ Յաղկերտին բողոքեցին, նորա համար Մուշկան թող չտուաւ որ զանոնք ալ սպաննեն, այլ երկու սուրբերը ծեծել տալով բռնեց քովը պահեց, իսկ միւսն քահանայները տեղերնին ուղարկեց. նոյնպէս ուրիշ ամուր բերդերն ալ՝ Պարսկաստանէն նոր զօրք բերել տալով՝ սաստիկ պաշարեց և զարկաւ, բայց մէջինները զիրենք լաւ պաշտպանելով՝ ամէն տեղ թշնամւոյն չարաչար յաղթեցին. նոցա մեծ մասը ջարդեցին և մնացածը փախուցին։ Ասոր վրայ Վասակ սաստիկ բարկացաւ և սկսաւ բերդ չունեցող տեղերն ապատակել, գիւղերն այրել, մարդիկները ջարդել ու գերի տանիլ։

Տմորեայ դաւառն ամրացած Հայ նախարարներն այս ամէն չարիքները լսելով՝ ա՛լ չուզեցին անգործ կենալ, այլ զօրքերնին առած դուրս ելան և Պարսից երկիրը յարձակեցան. շատ դաւառներ ասպատակեցին. քաղաքները կողոպտեցին և այրեցին և մարդիկները գերի բռնած իրենց ամրոցները բերին։

Նոյնպէս Խաղտեաց Պարխար լեռներուն վրայ եղող իշխաններն, ուր Հմայեակ Ս. Վարդանին եղբայրը գլուխ եղած՝ ցրուած զինուոր-

ները քովը ժողոված էր, երբոր տեսան թէ Պարսիկներն արձակ համարձակ ամէն կողմ կը յարձակին և կրցած տեղերնին կը թալլեն, կայրեն և եկեղեցիները կը կործանեն, իրենք ալ միաբան իրենց ամբոխիներէն դուրս ելան և ցրուած պարսիկներէն շատ մարդ սպանեցին. և այս կռիւներուն մէջ միայն Հմայեակ քաջ իշխանը՝ շատ քաջութիւններ ընելէն վերջը զարնուեցաւ և մեռաւ, իսկ միւս զօրքերը փախչող թշնամիներուն ետեւէն ինկան ու հալածեցին և շատ տեղեր ասպատակներէն մաքրեցին։ Ս.որ վրայ Պարսիկները վախցան և ասդին անդին յարձակելէ դադրեցան։ Իսկ Սրցախի անտառներուն մէջ ապաւինած Հայ զօրքը Հնաց Թադաւորին դեսպան ուղարկեցին և իւրեանց թշուառ վիճակն նորա իմացնելով խնդրեցին որ ինքն ալ դրած դաւինքին համաձայն Պարսից դէմ ելնէ։ Թադաւորն անմիջապէս ահագին բանակ մը կազմեց և յանկարծ Պարսից երկիրն արշաւեց, շատ գաւառներ այրեց, կործանեց և ժողովուրդը ջարդեց ու դերեց, որով Յաղկերտ շատ նեղն ինկաւ ու շրջոմեցաւ, մանաւանդ երբոր իւր Հայաստանի բանակին կրած մեծ վնասին լուրն առաւ։ Ուստի այս ամէն չարեաց շուտով վերջ տալու

համար բոլոր իւր զօրքը և Մուշկան զօրապետը Հայաստանէն հանելով՝ Ս.որորմիզդ իշխանը մարդկան դրաւ Հայոց վերայ և հրամայեց որ ամենուն հետ սիրով վարուի և երկիրը խաղաղեցնէ։

Եկաւ Ս.որորմիզդ և Հայոց խաղաղութեան աւետիսը բերաւ եպիսկոպոսներուն և քահանայներուն պատուէր ուղարկեց որ իւրեանց պաշտօնը կատարեն. միայն Ս. Յովսէփ կաթուղիկոսը, Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսը, Ս. Ղևոնդ քահանան և այլ մի քանի քահանայներ չկամայով կապած՝ Յազկերտին ուղարկեց։ Հրաման տուաւ որ դոցուած եկեղեցիները բացուին և ամէն մարդ իւր կրօնը համարձակ պաշտէ, բռնութեամբ ուրացածներուն՝ հրամայեց որ նորէն իրենց առաջին հաւատքը դառնան. խոստացաւ ալ որ հարկերը կը թեթեւցնէ և Հայաստան կեցող պարսից զօրքը քիչցուց։

Ս.յս ամէն բան տեսնելով փախչող եկեղեցականներն ու ախտարհականներն իւրեանց տեղերը դարձան, իսկ բերդերու մէջ ամրացած կամ հեռու տեղեր գացած նախարարներն՝ երբ տեսան թէ Հայաստան խաղաղեցաւ, Ս.որորմիզդին իմացուցին որ կուգեն Յազկերտին

երթալ, և նորա հետ Հայաստան կարգի դնելու համար անձամբ խօսիլ և եղած վնասներուն պատճառը նորա իմացնել։ Մարզպանն նոցա կողմանէ թագաւորին նամակներ ուղարկեց, և երդմամբ ևս հաստատեց որ ամենևին իրենց վնաս մը չի հասնիր. ասով նախարարները քիչ մը վստահութիւն ունեցան և եկան Յաղկերտին գացին։ Բայց Վասակ անոնցմէ յառաջ Պարսկաստան երթալով ամէն բան իւր ուզածին պէս պատմեց. որուն թագաւորը պատասխան տուաւ թէ՝ «Երբ քրիստոնեայ իշխաններն ալ հանին, այն ժամանակ երկու կողմանէ ալ կ'ըսեմ և դատաստան կ'ընեմ»։ Ուստի երբ իշխանները Պարսից դուռը հասան, Յաղկերտ Միհրներսեհին յանձնեց որ ամէն եղելութիւններն և պատահած չարիքներուն պատճառներն լաւ մը քննէ։ Միհրներսեհ դատաստանի նստաւ, որուն մէջ վասակին ամէն ըրածներն, այս կողմ և այն կողմ Պարսից դէմ օգնութիւն խնդրելու համար գրած նամակներն խաբէութեամբ այնչափ անմեղներուն մահուան՝ և քաղաքներուն ու գիւղերուն կործանման պատճառ լինելն երևան եկան։ Այն ժամանակ թագաւորին հրամանաւը բոլոր պատիւներէն հանուեցաւ և անարդութեամբ մահապարտներուն բանտը

դրուեցաւ, ուր սաստիկ հիւանդութենէ բռնուելով բոլոր անդամներն լուծուեցան ու փլատեցան, և մարմինն որդնոտեցաւ. և այսպէս չարաչար մահուամբ մեռնելով՝ իւր աղգին հասուցած թշուառութեանց սոսկալի պատիժն ստացաւ։

Բիւր անգամ անէծք այն Հայերուն՝
որ Վասակայ վերջ կը երթան։

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ

—

Յաղկերտ՝ իւր քովը եղող ամէն Հայ նախարարներն շղթայով կապել տուաւ, և կապեալ հոգևորականաց հետ Նիւշապուհ քաղաքը բանտարկեց, որոնց երդմամբ խոստացած էր որ ամենևին ինքս չհասցներ։ Ա. յս բանիս համար Բէլ անունով քրիստոնեայ Հոն մը շատ տրտմեցաւ և անմիջապէս գնաց Ռուշանաց թագաւորին՝ Հայոց Պարսիկներէն կրած նեղութիւնները և նախարարաց թշուառ վիճակը պատմեց, Թագաւորը Պարսիցմէ այս ըրածներնուն վրէժն առնելու համար, նոցա երկիրն արշաւեց. Յաղկերտին զօրաց մեծ մասը ջարդեց. շատ գաւառներ ասպատակեց, գերեց ու գերփեց, ապա վրայ Պարսից թագաւորը շատ նեղը մնաւ և խորին տրտմութեան մէջ անկաւ։ Բայց անօրէն մոգերն նորա տրտմութինը փարատելու համար ասացին թէ՝ «ձեզի

պատահած չարեաց պատճառը քրիստոնեայներն են, զորոնք կենդանի պահելովդ աստուածները քեզի դէմ բարկացան և այս պատիժը տուին, ուստի եթէ ձեր մեռը գտնուող քրիստոնեայներդ մեռցուցնելու լինիս, աստուածները կը հաշտուին և թշնամիներուն կրնաս յաղթել։

Անօրէն թագաւորն ասոյա հաւատալով՝ իւր բանակին մէջ եղող Սամուէլ և Աբրահամ քահանայները անմիջապէս նահատակել տուաւ, և Դենշապուհ իշխանը Նիւշապուհ ուղարկեց, որ այն տեղ բանտարկուած քահանայները ըսպաննէ. Դենշապուհ նոյն տեղը հասնելով՝ ըսեց որ քաղաքին երևելի մոգպետը Քրիստոնէից վրայ ծագաց երկնաւոր լոյսը տեսնելով քրիստոնեայ եղեր է, շուտով այս գործը թագաւորին իմացուց և նորա հրամանովը զանի հեռու տեղը քշեց և խոր փոսի մէջ նետել տուաւ։

Հուսկ յետոյ բանտարկեալներն՝ որք էին Ս. Յովսէփ կաթուղիկոսը, Ս. Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը, Ս. Ղևոնդ, Ս. Մուշէ, Ս. Արսէն քահանայներն և Քաջաջ սարկաւագը, քաղքէն հեռու անապատ տեղ մը տարաւ և տանջելով նահատակեց։

Եւ որպէս դի քրիստոնեայք նոցա սուրբ

մարմինները չդողնան, քովերնին պահապան-
ներ դնել տուաւ։ Բայց երեք օր վերջը՝ դիշեր
ժամանակ, սրբոց մարմնոյն նետուած տեղն ո-
ւրոտման սարսափելի ձայները լսուեցան և պա-
հապանք սկսան տանջուիլ. որոնք սարսափած՝
թողին և փախան։ Սոցա մէջ ծածուկ քրիս-
տոնեայ մ՚ալ լինելով՝ միւսներուն փախչելէն
զկնի դնաց տասն քրիստոնեայ անձինք ևս կան-
չեց և նոցա հետ Սրբոց մարմինները ժողովեց,
զատ զատ մաքուր պատառներու մէջ փաթա-
թեց և բերաւ կապուած նախարարաց և այլ
քրիստոնէից բաժանեց։

Բայց առաքինի նախարարներն երկայն ժա-
մանակ բանտին վիշտերն Աստուծոյ և քրիս-
տոնէութեան սիրոյն համար համբերութեամբ
քաշեցին, մինչև որ Եղուիշապուհ իշխանն նոցա
աղնուական բնութեանցը տեղեկանալով և շատ
անգամ նոցա հետ անձամբ տեսնուելով շատ
սեր կապեց, և հետամուտ լինելով՝ Պարսիկ
իշխաններուն միջնորդեց, Յաղկերտը հաւանե-
ցուց և հրաման առաւ որ զանոնք բանտէն ա-
զատէ, և իւրեանց պատիւը նորէն տուաւ. թա-
գաւորական դանձէն ալ ամենուն ռոճիկ կա-
պեց։

Փոքր ժամանակէն վերջը Յաղկերտ զանոնք

առջևը բերել տուաւ, և սիրով խօսելով՝ խոս-
տացաւ որ ամէնն ալ իւրեանց երկիրը ուղար-
կէ. բայց այս խոստումը դեռ չկատարած ինքը
մեռաւ և իրեն յաջորդեց իւր փոքր որդին Պե-
ռոզ, որն որ զանազան պատերազմներու և խը-
ռովութիւններու պատճառաւ հինգ տարի ևս
զանոնք Պարսկաստան պահեց, և իւր թագա-
ւորութեան վեցերորդ տարին ամէնը միատեղ
պատուով իւրեանց երկիրը ուղարկեց. Սորը-
վշնասպ Պարսիկ իշխանն ալ Հայոց մարզպան
անուանելով նոցա հետ միատեղ Հայաստան
ուղարկեց։

Բարեպաշտ նախարարները իւրեանց ցան-
կալի հայրենիքը դալով՝ բոլորովին փոխուած
և թշուառ վիճակի մէջ դտան։ Սմէն կողմ կը-
ռապաշտութիւնը՝ ուրացեալ իշխանաց և պարս-
կից մեծերուն ձեռքը տարածուած ու հաս-
տատուած էր, իսկ քրիստոնէութիւնը դրեթէ
կորսուածի պէս էր։ Ժողովուրդն և ուրացեալ
նախարարներն իւրեանց առաջին քաջութենէն
թուլացած՝ միայն աշխարհային զբօսանքներու
հետ կը լինին, այնպէս որ նոյն իսկ Պարսիկ-
ներն սկսած էին Հայերը նախատել՝ վատ և
անպիտան ազգ անուանելով, այս բաներն ա-
ռաքինի նախարարաց մեծ ցաւ եղաւ և սկսան

միաբան աշխատիլ և ջանալ որ քրիստոնէութիւնը դարձեալ պայծառացնեն, և մեղկացած ազգին նոր հոգի և նոր եռանդ մը տան։

ԴԻՒՑԱԶՆՈՒԹԻՒՆՔ

ՄԵԾԻՆ ՎԱՀԱՆԱՅ

—

Վահան Մամիկոնեան Ս. Վարդան Սպարապետին Հմայեակ եղբօրը մեծ որդին էր, մանկութեան ժամանակն իւր եղբայրներուն հետ պարսից ձեռքն անկաւ, բայց Գուդարաց Աշուշա բդեշխին միջնորդութեամբն ազատելով Վրաց երկիրը մեծացաւ, և իւր բարեպաշտ մօրմէն լաւ քրիստոնէի կրթութիւն առաւ։ Երբ որ Հայաստանին խռովութիւնները քիչ մը դադրեցան և նախարարները պարսկաստանէն եւ դարձան, Վահան ալ Հայաստան եկաւ և իւր քաջութեամբն ու իմաստութեամբը Պարսից տէրութեան մեծամեծ ծառայութիւններ ընելով՝ ամէն պարսիկ իշխաններուն և նոյն իսկ

Պերոզ թագաւորին սիրելի եղաւ։ Ուրացեալ նախարարներն՝ որոնք միշտ կը ջանային Քրիստոնէութիւնը ջնջել, Վահանին նախանձելով՝ զանիկայ թագաւորին աչքէն հանելու համար վրան ամբաստանութիւն ըրին որ՝ «կը ջանայ Հայերն ապստամբեցնել»։ Վահան այս ամբաստանութիւնը ստելու համար եկաւ Պարսկաստան դնաց հաւատքն ուրացաւ և թագաւորէն շատ պարգևներ առած Հայաստան դարձաւ։ Բայց նոյն օրէն խղճէն սաստիկ տանջուելով և խորին տրտմութեան մէջ ինկնելով հնարք կը մտածէր որ դարձեալ քրիստոնէութեան դառնայ։ Նոյն ժամանակները Վրաց Վախթանկ թագաւորը Պարսից ապստամբեցաւ, և Վրաստան մեծ խռովութեան մէջ ինկաւ։ Հայոց բարեպաշտ իշխաններն՝ որոնք նոյն ժամանակը Պարսից զօրքին հետ Սղուանք պատերազմի գացեր էին, այս գործը յարմար առիթ համարելով՝ մտքերնին դրին որ Հայաստան դառնալնուն՝ իրենք ալ Պարսից ու զիրենք անարգող ուրացեալներուն դէմ ելնեն և Հայաստանին մէջէն կռապաշտութիւնը բոլորովին ջնջեն, և կամ իրենք ալ իւրեանց հարցն ու հաւերուն նման քրիստոնէութեան համար զոհուին։

Պատերազմը վերջանալէն զկնի, եկան Շիրակ գաւառը բանակնին դրին և մէջերնին քանի մը հոգի անմիջապէս գացին Վահանին և իւրեանց խորհուրդը յայտնեցին։ Վահան 'ի սկզբան չուզեց նոցա հետ միանալ, բայց երբ տեղեկացաւ որ միայն քրիստոնէութեան պաշտպանութեան համար կուզեն այս գործին ձեռնամուխ լինել, նոցա հաւանեցաւ, նոյնպէս շատ ուրիշ բարեպաշտ նախարարներ ալ այս խորհուրդը լսելով՝ նոցա հետ միաբանեցան, և խօսքերնին հաստատուն պահելու համար ամէնն ալ Աւեւտարանի վերայ երդում ըրին։ Բայց մէջերնին Վարազշապուհ Սմատունի իշխանը զիշերանց գաղտուկ Ատրվշնասպ մարզպանին գնաց և Հայոց խորհուրդը յայտնեց։ Մարզպանն և բոլոր պարսիկ և ուրացեալ Հայ իշխաններն որ Շիրակ գաւառն էին, այս բանէս շատ վախեցան և առաւօտեան կանուխ ելնելով անկէ սկսան փախչիլ,

Միաբանեալ նախարարներն նոցա հետևէն ինկան, բայց չկրցան հասնիլ. միայն նոցա բոլոր ձիերն և Գագիշոյ Խուխոռունի ուրացեալ իշխանը հասան բռնեցին և Դուին բերին։ Վերջը լսեցին որ Ատրվշնասպ Մարզպանը իշխաններուն հետ Արտաշատ քաղաքը գացեր ա-

պաւիներ է. գացին նոյն տեղը պաշարեցին, բայց մէջիններն գիշերանց բերդէն ելան և Ատրպատականի կողմերը փախան։ Այն առեն նախարարները Սահակ Բագրատունի ասպետը Մարզպան դրին, Վահանն ալ Սպարապետ և Պարսից հետ պատերազմելու պատրաստուեցան։

Ուրացեալ նախարարներն Ատրվշնասպին խորհուրդ տուին որ դեռ Հայերը Վրաց հետ չմիացած, և Հոնաց զօրքը՝ զոր որ Վաթթանկ բերել պիտ'որ տար, չհասած, ինքն աճապարէ ու Հայոց վրայ երթայ զարնէ, որպէս զի առանց մեծ դժուարութեան կարող ըլլայ անոնց ապստամբութիւնը զսպել և նորէն նուաճել։ Մարզպանն առ խորհրդին անոնց և անմիջապէս Ատրպատականին կողմէն 7000 զօրք ժողվելով եկաւ Երասխ գետին եղերքը Նախիջեւանին դիմացը կեցաւ։ Սահակ Բագրատունին և Վահան ասոր լուրն առաջնուն պէս, Աստուծոյ ապաւինած՝ քովերնին եղող քիչ զօրքէն 400 հոգի ընտրեցին, նախարարներէն ալ Վասակ՝ Վահանին եղբայրը, Բարդէն՝ Սիւնեաց իշխանն և ուրիշ քանի մը մեծ իշխաններ, և թշնամւոյն դէմ խաւարեցին, որոնք երթալէն յառաջ եկեղեցին մտնելով՝ Աստուծոյ օգնութիւնը խընդրեցին, և առանց վախի ճամբայ ելան ու Վա-

ղարգերտ դեղը հասան։ Հոն լուր առին որ թշնամին դեռէն ասդին անցեր է. Վասակ յառաջապահ գնդին զօրապետն՝ ուղելով անոնց զօրութիւնը լրտեսել, իր գունդն առած՝ գիշերանց մինչև Կառակք գիւղը յառաջացաւ. բայց առաւօտեան մօտ Սուրիշնասպ ալ իւր զօրքովը յանկարծ նոյն գիւղը գալով՝ Վասակ իւր գնդովը մեծ վտանգի մէջ ինկաւ։ Սոյս քաջ իշխանն իւր զօրքն ազատելու համար Սուրիշնասպին մարդ ուղարկեց և ըսաւ որ՝ Հայոց կողմանէ քեզի ուղարկուած եմ հարկաւոր բան մի ասելու համար, որն որ ձեզի շատ օգտակար է»։ Իւր զօրքին ալ հրաման տուաւ որ քիչ քիչ գիւղէն ելնեն և Հայոց բանակն երթան։ Նոյն միջոցին ինքը Պարսից բանակն լաւ մը լրտեսեց, և երբ բոլոր իւր զօրքը գիւղէն ելան՝ Սուրիշնասպին խօսելու համար իրեն ուղարկուած Պարսիկներուն ըսաւ, «զիս ձեզի ուղարկող չկայ, ես միայն ձեր զօրութիւնը դիտելու համար եկած էի, և տեսայ որ ամենքնիդ ալ վատ ու անպիտան մարդիկներ էք»։ Սոյս ըսելով ձին վազցուց Հայոց բանակն եկաւ և յորդորեց որ թշնամւոյն բաղմութենէն ամենևին չվախնան, այլ քաջութեամբ պատերազմին։

Հայ իշխանները Վասակին խօսքերէն շատ քաջալերուեցան, և խորհուրդ ընելով որոշեցին որ ապահովութեան համար լերանց մօտ տեղ մը կենան, որպէս զի թէ որ յաղթուելու լինին՝ լեռներն իւրեանց ապաւէն լինի։ Սոյս նպատակաւ Սկոռի գիւղն եկան բանակնին դրին։ Հետեւեալ օրն առաւօտեան Աստուծոյ աղօթք ընելէն և նորա օգնութիւնը խնդրելէն զկնի՝ զօրքը չորս գունդ բաժանեցին. առաջին գունդը Վասակ Մամիկոնեանին և Բաբկէն Սիւնիին հրամանին ներքև՝ ճակատին կեդրոնը կեցաւ. աջ թեւն երկրորդ գնդին հետ Աստամ և Աստամ Գնունի իշխանները կեցան, ձախ թեւին գնդին ալ Գարջոյլ Խոռխոռունին զօրապետ դրուեցաւ. իսկ չորրորդ գունդը Ներսեհ ու Հրահատ Կամսարական իշխաններուն հրամանին ներքև՝ պահեստի համար ճակատին հետևի կողմը կեցաւ, որպէս զի որ գունդն որ տակրանայ՝ նորա օգնութեան հասնի. այսպէս այս փոքրիկ բանակը բարձր տեղւոյ մը վրայ բանակած պատրաստ կեցաւ։

Պարսիկները և ուրացեալ իշխանները իւրեանց զօրքերովը նոյն տեղը գալով՝ երբոր Հայոց սակաւութիւնը տեսան, կարծեցին որ նոքա խելքերնին կորսնցուցած մեռնելու եկեր

են, և անմիջապէս նոցա վերայ յարձակեցան։ Նոյն ժամանակը Գարջոյլ՝ ձախ թևին զօրապետն իւր գնդովը թշնամեաց կողմն անցաւ. իսկ մնացած Հայերն սաստիկ քաջութեամբ զարնուելով՝ թշնամեաց շատ ինչաս տուին. Ատրըվշնասպն ալ ուրիշ քանի մը պարսիկ և ուրացեալ իշխաններով զարկին սպանեցին. ասով պարսից գունդը շփոթեցաւ և սկսաւ ցրուիլ ու փախչիլ, Հայոց զօրքն նոցա ետևէն ինկան և սկսան հալածել։ Գարջոյլ Խոռխոռունին իւր գնդովն և ուրիշ պարսից գումարտակով մի Հայոց գնդին ետևի լերան վերայ ելաւ և ուզեց յանկարծ նոցա ետևն առնուլ, բայց Հայ զինուորներէն մէկը տեսնելով՝ պահեստի գնդին իմացուց, և անմիջապէս Ներսեհ և Հրահատ իւրեանց զօրքին մի մասովն նոցա վերայ յարձակեցան և վանեցին։ Պատերազմը կատարեալ վերջանալէն զկնի, Աղաստոմ Գնունին Սահակ Մարզպանին եկաւ և յաղթութեան աւետիսը տուաւ, այն ատեն Յովհան Մանդակունի կաթուղիկոսն՝ ամէն իշխաններն առաւ եկեղեցի տարաւ, և Աստուծոյ շնորհակալութեան աղօթք մատոյց. և այնուհետև ամէն մարդ իւր տեղը գնաց ձմեռն անցուցանելու համար։

Վահան Սպարապետը Վախթանկին դեսպան ուղարկեց որ իւր խոստմանը համեմատ Հոնաց զօրքը բերել տայ, որպէս զի գարնան միաբան պարսիկները զարնեն ու վանեն. զանի խաբէական խօսքերով ժամանակ կ'անցնէր, և վերջը 300 Հոնաց զօրք այս կողմէն և այն կողմէն ժողովելով Հայաստան ուղարկեց, բայց փոքր ժամանակէն զկնի զանոնք ալ ետ կանչեց, Սպարապետը Հայոց ուրիշ նախարարներուն ալ հրաւէր ուղարկեց որ դան իրեն հետ միանան և հաւատոյ պաշտպանութեան համար հեթանոսաց դէմն ելնեն. բայց շատերը չի լսեցին. միայն Յոհան Անձևացի Սեպուհն և Ներսեհ Երուանդունի՝ ուրիշ հաւատացեալ և բարեպաշտ մարդիկներով և զինուորներով Վահանին հրաւէրն ընդունեցան և ելան անոր գալու։ Սևուկ Անձևացեաց նախարարն և Յովհան Մոկաց իշխանն ուղելով զասոնք արգիլել որ չերթան, զօրքերնին առին և նոցա ետևէն հասան. բայց բարեպաշտ իշխաններն նոցա յաղթեցին, զօրքերնուն մեծ մասը ջարդեցին, Յովհան Մոկաց իշխանն ալ Ներսեհ Երուանդունիէն ըսպաննուեցաւ, և իրենք յաղթանակաւ Սպարապետին քովն եկան։

Գարնան՝ Պարսից թագաւորն Ատր Ներ-

սեհ իշխանն անթիւ զօրքով Հայոց վերայ ու-
դարկեց, որոնց հետ միացաւ նաև Սիւնեաց
Գրիգոն իշխանն ալ իւր զօրքովը։ Վահան ալ
անմիջապէս իւր զօրքը պատրաստեց և Յովհան
կաթուղիկոսն ալ հետն առած՝ Հեր ու Զարե-
ւանդ գաւառները պարսից դէմ գնաց, որպէս
զի այնտեղ զարնուի և չի թողնէ որ նոքա Հա-
յաստանի ներսի կողմերն քալեն։ Պատերազ-
մին առաջին երեկոյեան կաթուղիկոսը բոլոր
զօրքին Աստուծոյ օգնութիւնը խնդրելու համար
մասնաւոր աղօթք ընել տուաւ, և մի յորդո-
րական խօսեցաւ։ Երկրորդ օրն արեգակը ծա-
գածին պէս՝ Սպարապետը զօրքը կարգաւորե-
լով թշնամւոյն դիմացը ճակատեցուց, կեդրոնը
շատ ճիւաւորով Սահակ Բագրատունին կեցուց,
աջ թեւը Բարշղ (Բարսեղ) Վահեւունիին յանձ-
նեց, որուն քովն օգնական դրաւ Բաբկէն Սիւ-
նի, Ատոմ Գնունի, Փափակ Պալունի իշխան-
ներն, ձախ թեւին վրայ ալ Ներսեհ և
Հրահատ Կամսարական իշխանները զօրապետը,
իսկ ինքը Վրէն Վանանդեցւոյն հետ բոլոր ճա-
կատին աջ թեւը կեցաւ. պատերազմի սկսելէն
յառաջ պապ Սրտակունին ամէն գնդին զօրա-
պետներուն ուղարկեց և պատուիրեց որ իրենք
կամաց կամաց յառաջ քալեն, մինչև որ ինքն

իւր կողմանէ սկսի զարնուիլ։ և երբ տեսանեն
թէ իւր կողմի թշնամին ակարանալու կ'սկսի՝
իրենք ալ բոլոր զօրութեամբ յարձակին։ Բայց
Պարսիկներն ամէն կողմանէ միատեղ զարնուիլ
սկսելով՝ Հայոց գնդերուն սպասելու չի թողնե-
լով՝ նոցա աջ թեւն ետ մղեցին ու փախուցին։
Վահան այս բանս տեսածին պէս իւր օգնա-
կանին՝ Վրէն Վանանդեցւոյն տուաւ որ աջ թե-
ւին օգնութեան հասնի. բայց զանի այլայլած
պատասխան տուաւ «Ս.յս միջոցիս ինձ մի՛ ա-
»պաւինիր, վասն զի ես հիմա բան մը չեմ կա-
»րող ընել»։ Ս.ին ժամանակ Սպարապետն ե-
րեսը խաչակնքելով և իւր գնդին առջևն ան-
ցած՝ երկու Կամսարական իշխաններուն հետ
արծուի պէս թշնամւոյն վերայ յարձակեցաւ,
որոնք չկրնալով դիմանալ՝ իւրեանց ճակատին
կեդրոնը փախան. Վահան այն տեղ ալ եռե-
ւէն հասնելով շատերը ջարդեց. Վրէն իշխանն
որն որ իւր գնդովն երկայն ժամանակ քաջու-
թեամբ Հայոց դէմ կը դնէր, նիզակով զար-
կաւ սպաննեց. նոյնպէս Ներսեհ Կամսարական
Ատրվշնասպ մեծ իշխանը զարկաւ մեռուցց.
ասոնցմէ զատ ուրիշ իշխաններ ալ սպաննուե-
ցան. որով Պարսից դունդը շփոթեցաւ և սկսաւ
փախչիլ։ Վահանին զօրքն ալ սկսան զանոնք

հալածել։ Բարշղ Հայոց աղ թևին զօրապետն երբոր թշնամւոյն փախչիլը տեսաւ, ինքն ալ իւր ցրուած զօրքը ժողովեց և սկսաւ զանոնք հալածել՝ մինչև որ բոլորովին Հայաստանին սահմաններէն դուրս հանեցին. այնուհետև իրենք թշնամւոյն հարուստ աւարները ժողովելով բանակը դարձան։ Ա.յս մեծ յաղթութեան ժամանակ Հայոց դնդին ուրիշ մեծ ուրախութիւն մ'ալ ծագեցաւ. որովհետև Վահանին Վարդեղբայրն՝ որ Պարսկաստանի մէջ շղթայով կապուած բանտի մէջ էր, յանկարծ իւրեանց մէջը տեսան։ Ա.յս իշխանն Ա.ստուծոյ օգնութեամբը իւր կապանքներէն արձակուած և ամէն իւր ծառայներուն հետ առանց պահապաններուն իմանալուն բանտէն ելած Հայաստան եկած էր։ Հայերն Ա.ստուծոյ իրենց ըրած յայտնի օգնութիւններուն համար նորա շնորհակալութեան աղօթքներ և հանդէսներ ընելով Մաղկոսն դաւառը դարձան որ քիչ մը հանդչին։

Նոյն ժամանակը յանկարծ Վախթանկէն դեսպան եկաւ և պատմեց որ Պարսից Մ'իհրան զօրապետն անթիւ զօրքով Վրաց երկիրը յարձակեցաւ, և թագաւորը չկրնալով դէմն ելնել՝ Հայաստանին Սահմանակից լեռները փախաւ ապաւինեցաւ»։ Որովհետև Հայերը Վրաց հետ

դաշինք դրած էին և Ա.ւետարանի վրայ երդում ընելով խոստացեր էին նոցա օգնելու, ուստի Վահան իւր զօրքն առաւ Վրաստան գնաց և լերանց վրայ բանակը դրաւ։ Իսկ Վախթանկ խաբէութեամբ Վահանին ըսաւ թէ Հոնաց զօրքն ալ մեզի օգնութեան եկած և դաշտի վրայ բանակած են, և չեն ուզեր լերանց վրայ գալ. ուստի պէտք է որ մենք նոցա քովն երթանք և միաբան թշնամին զարնենք։ Սպարապետը թէպէտ Վախթանկին խաբէութիւնները գիտէր, բայց ըրած երդմանը համար այս բանս ալ յանձն առաւ և լեռներէն դաշտն իջաւ, քանի մ' օր ետքը Պարսից անհամար զօրքը Հայոց բանակին մօտենալով Կուր գետին միւս կողմը կեցան։ Պատերազմին առաջի երեկոյեան Վահանին քովի իշխաններէն մէկ քանին Մ'իհրանին գաղտնի մարդ ուղարկեցին և խոստացան որ պատերազմի ժամանակը իւրեանց զօրքովն այն կողմն անցնին»։

Երկրորդ օրը Վահան իւր դունդը թշնամւոյն դիմացը շարեց, աղ թևին վրայ Բարշղ Վահեւունին և Սատոն Գաբիղեանը հրամանատար դրաւ. ձախ թևը Վրաց թագաւորին յանձնեց. իսկ ինքը երկու Կամսարական իշխաններուն հետ կենդրոնը կեցաւ, և իւր քովն

ալ Սահակ սպասաւորը կեցուց։ Զարնուելու ըս-
կսած ժամանակներին Վահան իւր գնդովն իւր
դիմացի թշնամին սաստիկ յարձակմամբ մը մղեց
և փախուց և շատերը Կուր գետէն այն կողմը
վազեցուցին. շատ ալ մեծ իշխաններ սպաննեց.
նոյնպէս Վասակ Սպարապետին եղբայրը սաս-
տիկ քաջութեամբ թշնամին կը զարնէր։ Բայց
նոյն միջոցին ձախ թեւը կեցող Վրաց ու Հայոց
զօրքն երեսներին դարձուցին և սկսան փախչիլ,
և գլուխներնուդ ճարը հոգացէք պոռալով՝
միւս յաղթող գնդերն ալ շփոթեցին։ Այն
ժամանակ Վահան ա՛լ ետ քաշուեցաւ և փախ-
չողներուն ետևէն գնաց։ Պարսիկները Հայոց
և Վրաց ետևէն ինկան և անոնցմէ շատ մարդ
ջարդեցին։ Այս դժբաղդ պատերազմին մէջ
Հայոց դունդը մեծ կորուստ ունեցաւ. Իշ-
խաններուն մէջէն Սահակ սպասաւոր մարզպանն և
Սպարապետին Վասակ եղբայրը Մարտիրոսա-
կան մահուամբ մեռան, որոնց երեսը պատե-
ղազմէն յառաջ սաստիկ լուսաւորուելով իւ-
րեանց երջանիկ վախճանին հասած լինելը շա-
տերուն յայտնուեցաւ. Բաբիկէն Սիւնին վիրա-
ւորուեցաւ եւ Հրահատ Կամսարականն եւ Յազդ
Սիւնի Սեպուհը գերի բռնուեցան։

Վահան Տայոց ամուր տեղերը քաշուեցաւ

և ցրուած զօրքն ամէն կողմէն քովը ժողովեց։
Պարսից զօրապետն ալ բոլոր զօրքովն նորա ե-
տեւէն ինկաւ և պատգամաւոր մը ուղարկելով՝
ըսաւ, «ինչու համար քու թագաւորիդ դէմ
» ելեր ես, ե՛կ հնազանդէ նորա, եւ ապստամ-
» բութիւնդ թո՛ղ. ես թագաւորին միջնորդ կը
» լինիմ եւ ղանիկայ քեզ հետ կը հաշտեցնեմ,
» եւ ըրածներուդ համար ալ կատարեալ թողու-
» թիւն կ՚առնում»։ Բայց Սպարապետն նորա
խիստ պատասխան մը ուղարկեց, նորա առաջը
դնելով թէ ինչպէս Պարսից թագաւորը Հայոց
կրօնը ջնջելու կ՚աշխատի, տուած խոստումները
չպահէր, չար եւ անպիտան մարդիկներն իշխա-
նութեան կը հասցնէ, որոնք Հայաստանը տակն
ու վրայ կընեն ու կ՚ապականեն։ «Անցմէ
զատ ըսաւ, ձեր թագաւորը զՀայերը միշտ կը
նախատէ վատ ու մեղկ ազգ անուանելով, այս
խօսքը մեղի մեռնելէն աւելի ծանր է։ Մենք
երկու անգամ քանի մը հարիւր հոգւով ձեր
երեք չորս հազարին դէմ ելլելով՝ եւ յաղթելով,
ձեզի մեր ի՛նչպէս ազգ ըլլալը ցուցցինք, իսկ
այս անգամ չէթէ ձեր քաջութենէն յաղթուե-
ցանք, այլ մեր զօրացն անմիաբանութենէն. Հի-
մա որովհետեւ կ՚առաջարկես որ նորէն ձեզի
հնազանդինք, իմ ալ ձեզի ընելու առաջար-

կութիւնս այս է, թէ որ Քրիստոնէութեան կատարեալ աղատութիւն կուտաք եւ ամէն կրաակատուններրը, մոդերն եւ ուրիշ կռապաշտութեան նշանները բոլորովին Հայաստանէն կը ջնջէք անպիտան իշխաններն իշխանութենէ կը հանէք, եւ նոցա տեղ աղեկներն ու բարեբարները կը դնէք, ձեզի կը հնազանդինք, իսկ թէ որ ոչքա ընել յանձն չէք առնուր, մենք ալ միտքերնիս դրած ենք մինչեւ վերջին շունչերնիս ձեզի դէմ դնելու »։

Միհրան այս խօսակցութեան մէջ եղած ատենը, թագաւորէն հրաման եկաւ որ Պարսկաստան դառնայ, այն ալ անմիջապէս բոլոր զօրքովը՝ բռնած Հրահատ եւ Ցաղդ իշխաններն ալ շղթայով կապած հետն առաւ ճամբայ ելաւ, բայց Հրահատ իր Ներսեհ եղբօրն աղաթքովը Պարսից ձեռքէն աղատեցաւ, իսկ Ցաղդ Սեպուհը նահատակեցաւ։

Միհրանին երթալէն զկնի Վահան Սպարապետը Վաղարշապատ եկաւ, ու հոն Մայր եկեղեցւոյն մէջ Աստուծոյ շնորհակալութեան հանդէս ըրաւ, անկէ Դուին գնաց. ձմեռը անցուներու համար։ Բայց յանկարծ Վրաց կողմէն երկու խաբեբայ մարդիկ եկան և պատմեցին որ Սահակ Բագրատունի Մարզպանն եւ Վասակ՝

Վահանին եղբայրը մեռած չեն, այլ վիրաւորած ինկած ըլլալով՝ սողալով անտառի մը մէջ մնան պահուրտեցան, և հիմա թշնամին ետեւնէն ինկած է որ ձեռք ձգէ, ուստի շուտով օգնութեան հասէք։ Շատերն այս խաբէական խօսքին հաւատացին եւ կուզէին որ անմիջապէս Հայոց դունդը Վրաստան երթայ և այն երկու իշխաններն ազատէ, մանաւանդ նոյն իշխանաց ընտանիքը շատ ետեւէ կ'ըլլային։ Սպարապետը շատ աշխատեցաւ և յայտնի ցուցուց որ այս բանս սուտ և խաբէական է, բայց երբ չկրցաւ համոզել, ըսաւ անոնց. Ս. հաւասիկ զօրքը ձեր ձեռքն է, ի՛նչպէս որ կամիք ըրէք, միայն թէ գիտցած ըլլաք որ զօրութիւնիս բաժնելը մեզի շատ մեծ վնասներու պատճառ կ'ըլլան։ Յայնժամ Մուշեղ Մամիկոնեան Սեպուհին գունդը զօրք տուին ու Վրաստան յուղարկեցին, զորոնք այն երկու խաբեբայները զանազան և անոտի պատճառներով բոլոր ձմեռն ատանդական պտրտցուցին։ Ձմեռը հաղիւ թէ անցաւ և Գարնան գեղեցիկ օրերն սկսան, Զարմիհր Հաղարաւուխտ Պարսից զօրավարը բիւրաւոր զօրքով յանկարծ Հայաստան մտաւ և Երասխ գետէն անցնելով՝ Արտաշատ քաղաքն եկաւ։ ուր ուրացեալ նախարարներուն մատնութեամբն

իմանալով՝ նոր Հայոց գնդին կէսը Վրաստան դացած է և Վահանին քովը քիչ զօրք կայ, երկրորդ օրը ճամբայ ելաւ ու Դուինի վրայ քալեց։

Վահան ամենեին առանց շփոթելու իւր քիչաւոր զօրքովը Պարսից դէմ ելաւ և նոյա մէկ կողմը զարնելով՝ մասմը բուն բանակէն բաժնեց և շատերը ջարդեց, և անցաւ Խաղտեաց կողմն, ամուր տեղ մը գնաց կեցաւ։ Նոյն ատենը Մուշեղ Սեպուհն՝ որն որ բոլոր ձմեռը Վրաստան ապրին անգին թափառած էր, Հայաստան դարձաւ, և եղածն իմանալով՝ ինքն ալ Վահանին քովը գնաց։ Զարմիհր բոլոր զօրութեամբ Վահանին ետեւէն ինկաւ. ճամբան շատ բերդեր կործանեց ու շատ ալ արիւն ըրաւ, և լսելով որ Վահան Յունաց մասին մէջ Վարայրվարոյ դեղն է, շուտ մը հոն գնաց, բայց որովհետև Սպարապետն անկից դացած էր։ դարձաւ Բասէն դաւառն եկաւ։ Հոն իրեն թագաւորէն հրովարտակ մ'եկաւ, որուն մէջ կը ծանուցանէր որ ինքը Հերթաղներուն դէմ սպատերազմի ելիտոր երթայ, և կը հրամայէր որ Տապուհ Միհրանեանը Հայաստանի Մարզպան դնէ, և ինքը Վրաստան երթայ, Վախթանկը կամ բռնէ կամ սպաննէ. Զարմիհր Տապուհին

մարզպանութեան իշխանութիւնը տալէն վերի՞ Սիւնեաց Գդիհոն ուրացող իշխանն ալ անոր օգնական դրաւ և ինքն ելաւ դնաց։

Այս նոր Մարզպանը զՎահան ձեռք ձըդելու համար անդադար նորա ետեւէն ինկաւ և ամէն կողմ զօրք յուղարկեց. իսկ Սպարապետն՝ որովհետև քովը քիչ զօրք ունենալով՝ չէր կրնար նորա դէմ ելլել, նորա ասդին անդին ցրուած զօրաց վրայ կը յարձակէր և շատերը կը ջարդէր։ Տապուհ տեսնելով՝ որ իր զօրքն օր ըստ օրէ կը քիչնայ, Գդիհոն Սիւնիին խորհրդովը բոլոր զօրութիւնը մէկտեղ բերաւ ու Վահանին վրայ քալեց՝ որն որ քիչ մը հանդիստ առնելու համար Երիզա գեղը դացած էր, և անոր մօտ բանակը դրաւ։ Վահան անմիջապէս զօրքն առաւ դեղէն դուրս ելաւ, Երիզայի դեղացիներն ալ ժողվեց ու դիշերանց Պարսից բանակին վրայ եկաւ, դիւղացիներուն ձեռքը մէյմէկ վահան տուած՝ իր զօրքին առաջը շարեց որպէս զի ապահով ըլլան, և հրաման տըւաւ որ ամէնը մէկտեղ սկսին թշնամեաց բանակին վրայ նետ նետել։ Պարսիկներն այս անակնկալ յարձակմանէ շփոթելով ու սարսափելով՝ կարծեցին թէ թշնամին իրենց բանակը կոխեր է, և սկսան դիրար ջարդել։ Հայերը քիչ

մը ժամանակ այսպէս Պարսիկները խառվելէն
ետեւ, անվնաս դարձան Տեսայ գեղն եկան
գիշերուան մնացած մասն անցուցին։ Երկրորդ
օրը Տապուհ մնացած զօրքն առած՝ կատաղա-
բար նոյն գեղին վրայ եկաւ, Սպարապետը
թէպէտև շատ քիչ զօրք ունէր, բայց Աստու-
ծոյ օգնութեանն ապաստելով՝ զանոնք կարգի
դրաւ և թշնամւոյն դիմացը շարեց։ Հաղիւ թէ
զարնուելու պիտ՝որ սկսէին, մէյմ՝ալ տեսաւ որ
իր զօրքին մեծ մասը երեսնին դարձուցեր կը
փախչին և քովը միայն քանի մ՝ իշխան և 40ի
չափ զինուոր մնացեր են, բայց անոնք ալ
միւսներուն փախչիլը տեսնելով՝ զարհուրած
էին։ Մէջերնէն մէկն իրեն ըսաւ. Տէր միտ
դիր, նայէ վիճակնիս. Սպարապետն արիու-
թեամբ մը պատասխան տուաւ. հիմա՛ լ միտ
դնելու ժամանակ չէ, ես յոյս չէ թէ մարդու՝
այլ Աստուծոյ վրայ դրած եմ. այս ըսելով ե-
րեսը խաչ հանեց ու թշնամեաց դնդին վրայ
յարձակեցաւ, քովի մարդիկներն ալ իրեն հե-
տեւեցան։ Պարսից զօրագլուխն այս խելքէ
դուրս գործքին վրայ ապշած և այլայլած, շուտ
մը Գդիհոնին մարդ խաւրեց որ իր գնդովը գայ
որ Վահանը մէջ առնուն ու բռնեն. այն ալ
ուրախութեամբ վազեց եկաւ։ Բայց Աստու-

ծոյ ապաւինած քաջերը 2—3000 թշնամին
աներկիւղ զարկին, անոնցմէ շատերը մեռած
դեսլնը փռեցին, ու ջրի պէս ճեղքեցին, դուրս
ելան, իրենցմէ միայն 4 հոգի կորսնցնելով,
նախ Գդիհոն ուրացող իշխանն ալ չարաչար վի-
րաւորեցին, որն որ քանի մ՝ օր ետքը հոգին
փչեց, և շատ ատեն առանց վախի Պարսից
դնդին քովէն նոցա հետ յառաջ գացին։ Վա-
հանին այս արտաքոյ կարգի գործքը Պարսից
զօրքն այնչափ զարհուրեցուց որ բոլորովին լը-
քան և վհատեցան, և Հայոց նայելու ալ չէին
համարձակեր, կ՝ըսէ Ղազար Փարպեցի ժամա-
նակակից պատմիչը, կարծելով թէ նոքա հին
դիւցազուններէն կամ բնութենէ վեր մարդիկ
են, զորոնք տեսնելն ալ մեծ վտանգներ կը բե-
րէ։ Իսկ Սիւնեաց զօրքն՝ իրենց իշխանին մեռ-
նելէն ետքը տեղերնին ցրուեցան։ Տապուհ
զօրապետն ալ Վահանին յաղթելէն բոլորովին
յոյսը կտրելով՝ Բասեան դաւառը քաշուեցաւ։

Նոյն ժամանակը Պարսկաստանէն դեսպան
մ՝եկաւ և իրեն դոյժ բերաւ որ Պերոզ բոլոր
զօրութեամբ Հեփթալներուն դէմ պատե-
րազմի գնաց, և անոնցմէ յաղթուելով զօրքն
ջնջուեցաւ, ինքն ալ սպաննուեցաւ. ուստի
անմիջապէս քովի զօրքն առաւ Պարսկաստան

դնաց։ Աստոր երթալէն առաջ Վահան Սպարապետն իւր ուխտակից իշխաններովը Վաղարշապատ քաղաքը դնաց, և հոն Մայր եկեղեցւոյն մէջ Աստուծոյ շնորհակալութեան մեծ հանդէս կատարեց։ Եւ որովհետև նոյն եկեղեցին շատ հինցած էր, նորէն շինել տուաւ ու զարդարեց։ Անկէ իր ընկերներուն հետ Դուին քաղաքը դնաց և խաղաղ ու հանգիստ կեանք կ'անցընէր։

Պարսից նախարարները Պերոզին տեղը ասոր Վաղարշ եղբայրը թագաւոր դրին, որն որ հեղ և խաղաղասէր ըլլալով՝ դահն ելլելուն պէս իր իշխանութեան տակն եղող երկիրներուն խռովութիւնը դադրեցնելու ձեռք զարկաւ, և նախ Հայաստանէն սկսելով՝ Նիխոր Վշնասպդատ իշխանը հոն յուղարկեց որ երթայ ինչ եղանակաւ որ ըլլայ Վահանին հետ հաշտութիւն ընէ, բայց հրաման ալ տուաւ որ հետը շատ զօրք ալ տանի, որպէս զի չըլլայ թէ Հայերը հաշտութիւնը յանձն չառնուն, և իրեն ալ ստիպեն։

Նիխոր՝ Հայաստանին հեր դաւառն եկաւ և անկէ Վահանին երկու մեծ իշխան խաւրեց, իմացնելով որ թագաւորը զինքն խրկած է Հայոց հետ հաշտութիւն ընելու և նորէն խաղաղութեամբ իրեն հնազանդեցնելու համար։

Սպարապետն իւր բոլոր ուխտակից եղբայրները ժողվեց, և պատգամաւորաց հրամայեց որ նոցա առջևն Նիխորին պատգամը ղրուցեն, երկրորդ օրը Հայ իշխաններուն հետ խորհուրդ ընելով՝ եկող պարսիկ իշխանաց այս պատասխանը տուաւ։ «Մենք շատ պատճառներու համար ձեր թագաւորին դէմ ելած ենք, որոնց ամէնը եթէ թագաւորին հետ անձամբ խօսելու առիթ լինի՝ կը յայտնեմ։ Բայց հիմա որ զմեզ հաշտեցնելու եկած էք, յետագայ երբեք պայմաններն իբրև հաշտութեան հիմ կը պահանջեմ. նախ մեր կրօնին բոլորովին ազատութիւն պիտոր տաք և կռապաշտութեան նշանները Հայաստանէն պիտի վերցնէք. Հայերն հաւատքնին փոխելու ամենևին պիտի չստիպէք, մէկու մը հաւատքի համար իշխանութիւն պիտի չտաք։

Երկրորդ՝ չար և անպիտան մարդիկներն իշխանութեան պիտի չհասցնէք, այլ միայն արժանաւորներն, և որոնք որ երկրին պայծառանալուն փոյթ և ջանք ունին։ Երրորդ՝ թագաւորն ամէն եղած ամբաստանութեանց շուտով պիտի չհաւատայ, այլ ինքն անձամբ լաւ պիտի քննէ և արդար դատաստան ընէ։ Եթէ այս պայմաններն յանձն կառնուք, և դրաւոր և թէ

թագաւորին կնքովը կը հաստատէք որ միշտ հաստատուն կը պահէք, մենք ալ ձեզ հետ կը հաշտուինք և նորէն ձեզի կը հնազանդինք, իսկ եթէ չուզէք յանձն առնուլ, մենք երդիս հաստատուն դրած եմք որ մինչև վերջին շունչերնիս ձեզի դէմ դնենք, և աւելի կուզենք մեռնիլ քան թէ ձեզի ծառայել»։

Սպարապետը պատգամաւորներուն այս խօսքերը ընելէն ետքի՝ իւր քովի իշխաններէն հինգ հոգի նոցա հետ Պարսից զօրապետին ուղարկեց. Նիխոր զանոնք շատ սիրով ընդունեցաւ և սեղանի հրաւիրեց և պատգամաւորներէն Վահանին պահանջածները լսելով՝ շատ հաճեցաւ, և շուտ մը նոցա նամակ գրեց, խոստանալով որ ամէն ուզածները կը կատարէ, և դինքն ալ հրաւիրեց որ իւր քովը գայ և միմեանց հետ բերան առ բերան խօսին։ Ուստի Սպարապետը բոլոր զօրքովն Սրատաղ գաւառը գնաց և Նիխորին պատգամ ուղարկելով ըսաւ, որպէս զի ես քու քովդ գամ, պէտք ես ինձ այս տեղ քանի մի Պարսիկ իշխաններ ուղարկել, որոնք իմ մարդոց քով կը մնան մինչեւ որ իրարու հետ խօսինք և բաժնուինք։

Զօրապետը Վահանին խնամատարութեան վրայ զարմացած՝ ութը մեծ իշխաններ ուղարկեց,

զորոնք Սպարապետն իւր հաւատարիմ մարդոց յանձնեց, պատուիրելով որ պատուով պահեն. և ինքն զօրքին մեծ մասը հետն առաւ Նիխորին գնաց։ Երբ նոցա կեցած դիւղին մօտեցաւ, հրամայեց որ պատերազմի փողերն սկսին զարնել. Պարսիկներն այս դէպքէն այլայլեցան, կարծելով թէ Վահան խաբէութեամբ եկած է նոցա հետ պատերազմելու։ Նիխոր նոցա երկու իշխան ուղարկեց և ըսել տուաւ թէ՝ «ինչո՞ւ համար Պարսից սովորութեան դէմ կը գործես. (որովհետև միայն Պարսից Սպարապետը փող զարնելով բանակը կը մտնէր)։ Վահան ալ պատասխան տուաւ Նախ դու դիս Պարսից հնազանդեցուր, այնուհետև ես ալ Պարսից սովորութիւնը կը պահեմ, վասն զի առանց ձեզմէ սորվելու ձեր տէրութեան սովորութիւնն ու կարգը գիտեմ։ Այս խօսքերէն վերջը Նիխորին քովն եկաւ, որ շատ պատուով ընդունելութիւն ըրաւ, և իւր ամէն ինդրածները կատարելու հաստատուն խօստում տալով՝ իրարմէ բաժանեցան և Վահան Դուին դարձաւ։ Իսկ Նիխոր՝ որ վնասեւ նոյն ժամանակը Պերոզին Զարէհ որդին Վաղարշին դէմ ելած էր և կուզէր թագաւորութիւնն նորա ձեռքէն յափշտակել, իւր զօրքովը Պարսկաստան կանչուեցաւ,

որ երթալու ժամանակ Վ.ահանէն՝ խնդրեց որ Հայոց զօրքին մի մասն ալ թագաւորին օգնութեան ուղարկէ։ Սպարապետն Վրէն Վանանդեցւոյն և իւր եղբօրորդւոյն Գրիգոր Մամիկոնեանին գունդ մը զօրք տուաւ և Պարսկաստան ուղարկեց. որոնք շատ քաջութեամբ պատերազմելով՝ թագաւորին թշնամեացը յաղթեցին, Մի քանի օրէն վերջը Վ.ահան ալ իւր ուխտակից նախարարներն և զօրքին մնացած մասը հետն առած Վաղարշին գնաց, որուն թագաւորը շատ պատիւ ըրաւ և ամէն կամքը կատարեց, և պայմաններն իւր կնքով և առանձին հրովարտակով մը հաստատեց. նաև զինքը Մամիկոնեան յեղին նախարար և բոլոր Հայաստանի զօրաց վրայ Սպարապետ կարգեց։ Նոյնպէս ուրիշ նախարարներուն ալ պատիւներ և պարգևներ տուաւ և փառքով Հայաստան ուղարկեց, որոնք եկան նախ Վաղարշապատու Մայր եկեղեցւոյն մէջ շնորհակալութեան հանդէս կատարեցին և աղքատաց առատ ողորմութիւն բաժնեցին և անկէ դարձան Դուին քաղաքն եկան։

Հայաստան այսպէս ամէն կողմանէ բոլորովին խաղաղանալով՝ Անդեկան իշխանը թագաւորէն մարզպան դրուեցաւ։ Այս իշխանն

իւր իշխանութեան ժամանակ Վ.ահանէն ըրած խմաստուն կարգադրութիւններն և ամէն ձեռնամուխ եղած գործ.երուն յաջողութեամբ կատարելը տեսնելով՝ նորա վրայ մեծ համբաւ ունեցաւ և շատ սէր կապեց։ Երբոր հարկաւոր գործ.ի մը համար Պարսկաստան գնաց Վ.ահանէն ըրած գործ.երը թագաւորին պատմելով՝ նորա ըսաւ, թէ Հայաստան լաւ ծաղկեցնելու և խաղաղութեամբ պահելու համար պէտք է Վ.ահանը Մարզպան գնել։ Վաղարշ այս առաջարկութեան հաճեցաւ, և հրովարտակ մը գրելով նորա մարզպանութեան իշխանութիւն տուաւ։ Վ.ահան այս հրովարտակն առաւ թէ չէ՝ բոլոր իւր ուխտակից նախարարներովն եկեղեցին գնաց, և ժողովրդեան բազմութիւնն ալ ամէն կողմանէ այն տեղ խրատնուեցան և շնորհակալութեան փառաւոր տօն կատարեցին. Յովհան կամուրջիկոսն ալ ժողոված բազմութեան գեղեցիկ յորդորական ճառ մը խօսեցաւ։

Հայաստան ութ տարի չափ խաղաղութիւն և հանդստութիւն վայելելէն վերջը՝ նոր քաղաքային խռովութեան փոթորիկ մը զինքը պատեց և ամէն խաղաղութիւն վրդովեց. վասն զի Կաւատ Պարսից թագաւորը մոգերուն դրդռելովը

Հայոց դէմ դարձեալ հալածանք հանեց և Հայաստան շատ զօրք ու մոգեր ուղարկեց, որոնք եկան այս կողմ այն կողմ կրակատուններ շինեցին։ Վահան Մամիկոնեան մարզպանն որ այնչափ տարի կրակապաշտութիւնը ջնջելու համար պատերազմ բացած էր, այս բաներս տեսնելով ասոուածապաշտ նախարարները ժողովեց և Պարսից դէմ ելաւ, զօրքերն ու մոգերը ջարդեց և կրակատունները կործանեց։ Կաւատ սաստիկ բարկացած՝ սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել որ Հայաստան արշաւէ, բայց իւր իշխաններն ապստամբելով՝ զինքն աթոռէն վար առին։ Քիչ մը ետքը Կաւատ թագաւորութիւնը նորէն ձեռք ձգեց, և ուղելով Յունաց դէմ պատերազմի ելլել, Հայոց հետ հաշտութիւն ըրաւ։

Վահան քսան և հինգ տարիի չափ Հայաստան կառավարելէն ետքը վախճանեցաւ, և իր Վարդ եղբայրը Մարզպան եղաւ. բայց իւր իշխանութեան երրորդ տարին Կաւատ զինքը մարզպանութենէ ձգեց, և Բուրզան պարսիկը Մարզպան դրաւ։ Սորա ժամանակը Հոնաց զօրքը Հայաստան արշաւեցին ու շատ դաւառներ ասպատակելով՝ մինչև Սասուն դաւառը հասան. հոն Մժէժ Գնունի քաջ իշխանը իր

զօրքովն նոցա դէմ ելաւ, և սաստիկ ջարդ մը տալով փախուց։ Կաւատ Մժէժին ասքաջութիւնը իմանալով՝ զանի Բուրզանին տեղ Հայոց Մարզպան դրաւ, որն որ երեսուն տարի Հայաստան խաղաղութեան մէջ պահեց։

Երանի՜ այն Հայերուն՝ որ Վահան և Մըժէժի սիրտն ու ոգին ունենալով՝ միշտ կը մտածեն իւրեանց ազգին վրայ, և պէտք եղած ջանքն ու խնամքը չեն զլանար իւրեանց արենակից եղբայրներէն, և իւրեանց գործունէութեամբը այլոց ևս խրախոյս և քաջալերութիւն կուտան. միով բանիւ բարի օրինակ կըլլինին. այնպիսի Հայերն յաւերժ կեցցե՜ն . . . . . .

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

ԵՒ

ԱՌՈՒՄՆ Ի ՅՈՒՆԱՑ

—

1862 թուականին և Օգոստոս 23րդ օրը Կոստանդնուպօլսէն մեկնելով՝ դէպ՝ի Հայաստան ճանապարհորդութիւն ընելու և ԱՆԻ հռչակաւոր Քաղաքը տեսնելու բաղդն ու արժանաւորութիւնը ունեցանք. թէպէտ մեր Հայաստանի ճանապարհորդութեան մանրամասն նկարագրութիւն գրած պատրաստի ունինք, բայց նորա հրատարակութենէն յառաջ Անի քաղաքի և նորա առման նկարագրութիւնը կ՝ընենք այժմ, որ կարի հետաքրքրական է, հետևաբար մեր բոլոր ճանապարհորդութեան պատմութիւնը յայլում նուագի թողլով։

Մեր տակաւ դրիչը չի ներեր որ Անի քաղաքի նման հոյակապ և հռչակաւոր տեղի մը մանրամասն նկարագրութիւնը ընելով կարողա-

նամք մեր ընթերցողաց հետաքրքրութիւնը գոհացնել. ուստի Վայդունդ Համիլտն երեւելի Անգղիացւոյն ճարտար գրչին կը յանձնենք որ 1836 թուականին և Յունիս 13ին նոյն քաղքին մէջ մի ամբողջ օր մնալով՝ մեր տեսածներուն հանգուանատիպ պատկերն կը ներկայացնէ «Աւերակը, կ՝ըսէ, հիմակուան Անի* ըստուած դիւղէն մի Անգղիական մղոն և Կարսին ուղղակի արեւելեան կողմն, յորմէ 24 մղոն հեռու Ախուրեան գետին քովն է։ Դիրքն եռանկիւնի ձեւ մը ունի և ապառաժուտ թերակղզոյ մը վերայ է. որուն Արեւելեան կողմը ժայռերով կը պաշտպանուի և նոցա առորոտը գետին հոսանքը կը թանայ։ Արեւմտեան կողմը ցամաք փոս մը կայ, որուն երկու կողմերն խառնշներով և այրերով խորունկցուած են։ Իսկ երրորդ կողմն որ առաջին երկու կողմերուն հետ միանալով՝ եռանկիւնը կը կատարէ, ամուր, լայն և շատ տեղ կրկին պարսպով պատած և անհամար կլոր աշտարակներով ապահովցած է։ Քաղաքէն դուրս միայն երկու հայերէն արձանագիրներով լեցուն մատուռ կայ, որոնց շէնքը պարսպին ներսի

(*) Որուն մէջ մի օր եւ մի գիշեր մնացինք։ 1862 Հոկտ. 17 եւ 18 Ց. Դ.

» շէնքերուն նման է։ Սոցա բարձրութիւնը տեղ
» առ տեղ 40—50 ոտնաչափի կը հասնի. սոցա
» շինուածքը շատ սքանչելի է. դրսէն զարմա-
» նալի ճարտարութեամբ իրարու վրայ դոցուած
» մեծամեծ չորեքկուսի քարեր զինքը կը պա-
» տեն, Քաղքին մէջը մտնելու միայն երկու
» դուռ կարողացոյց գտնել, Սրեւմտեան դրան
» երկու կողմը շատ բարձր աշտարակներ շին-
» ուած են, բայց շէնքերէն թափուած նիւթե-
» ը զանիկայ բոլորովին գոցած և անմտանելի
» ըրած են։

,, Սրեւելեան դռնէն մտնելու ժամանակ պէտք է կրկին պատերէ անցնիլ, բայց այս երկու պատերուն մուտքերն մէկ ուղղութեան մէջ (դիմացէ դիմաց) այլ ներքինն արտաքնոյն դէպ 'ի ձախ կողմն՝ որմէ բաւական հեռու է։ Դրսի մուտքին անմիջապէս դիմացն ինկող պատը Հայերէն արձանագիրներ կը ծածկեն, սոցա քարի վրայ նուազ արուեստով փորուած առիւծի պատկեր մի կայ, որն որ Հայոց ճարտարապետութեան հասարակ զարդերէն մին է։ Նաեւ ներքին դրան երկու կողմերն ալ կլոր աշտարակներ կը բարձրանան, որոնց ձախ կողմինին ստորոտն, անմիջապէս դրան մուտքին քով երեք խաչքեր, և նոցա իւրաքան-

չիւրին մէջ վրանին մէկ մէկ լաչի պատկեր փորուած խոշոր քարեր կան։

Այս դռնէն ներս մտնելուն անմիջապէս, զարմանալի քաղքին բոլոր տեսարանը կը բացուի։ Այնքան կողմ փոքրիկ շէնքերու և բնակութեան տներու աւերակներով լեցուն է, որոնց մէջ 20ի չափ մեծամեծ շէնքեր (ըստ մեծի մասին եկեղեցի և մատուռ) կանգուն կրկենան, Այնցմէ զատ կան երկու բարձր մզկիթի աշտարակներն և երկու թաղաւորական պալատները։ Բայց սոցա մէջ ամենէն աւելի մտադրութիւնն իւրեան դարձնողը մեծ ու փառաւոր եկեղեցին է, զոր որ միւսներէն զանազանելու համար Մայր եկեղեցի կրնանք անուանել։ Այս ընդարձակ խաչաձեւ շէնքը դրան ճամբուն Հարաւային կողմն կիյնայ, և դեռ անաւարտ մնացած է, որածայր յարկը խոշոր չորեքկուսի քարերով ծածկուած և ներսէն կամարի վրայ հաստատուած է, որն որ իր կեդրոնին վրայ եղող գմբեթէն (կաթողիկէէն) զատ ամբողջ կը կենայ։ Եկեղեցւոյն գլխաւոր դուռը շէնքին Սրեւմտեան ծայրը կիյնայ, որուն երկու կողմն Հայերէն արձանագիրներ կը ծածկեն. ոչ թէ որ օրինակուելու և հրատարակուելու չինին, Հայոց պատմութեան շատ

լուսաւորութիւն կրնան տալ։ Անիին մէջ գրեթէ չէնք չկայ որ Հայերէն արձանագրով լեցուն չլինի։ Եկեղեցւոյն ներսի կողմը մէկ գլխաւոր մեծին ճիւղ և երկու կողմնական թեւեր բաժնուած է։

«Սովորինը 107 ոտնաչափ լայնութիւն ունի։ Շինութեան կերպը հին Սարակինոսեան և Բիւզանդեան ոճին խառնուրդ մըն է, և այս ճարտարապետութեան ձեւը բոլոր Անիին մէջ կը տեսնուի, բայց չէնքերէն շատերուն մէջ զարդերու ու քանդակներու զանազանութիւն մի կայ, որոնք միշտ Արաբացւոց կամ Մաւրիտանացւոց հարուստ զարդերուն կը նմանին։ Քաղքին Հարաւային կողմն Երեքանկեան ծայրին մօտ բարձր ապառաժ մի կայ, որուն վրայ առանձնականաց տներ և 34 մատուռ շինուած են։ Այս մատուռներէն մին դեռ անկործան կեցած է, որուն չէնքը շատ գեղեցիկ ու հարուստ է։ Ապառաժին ու Մայր եկեղեցւոյն մէջերն ուրիշ եկեղեցի մ'ալ կայ, որն որ թէպէտ եւ գեռնի հաւասար եղած է, բայց իր աւերակներուն մէջն ալ ճարտարապետութեան ամենաբարակ գործուածներ կը տեսնուին։ Ասկէ քաղքին Արեւմտեան կողմը դառնալով շատ հարուստ զարդարուած չէնքեր կուգան, որոնց

մէջ 30 ոտնաչափ տրամագծով ութանկիւն մատուռ մի կայ։ Այսի իւր պատերուն վրայ եօթը բոլորաձեւ խորշեր ունի, վրան գմբեթ մի ծածկած է և ութը կողմանէ մուտք ունի։ Շէնքին ներսի կողմը շատ պարզ է, բայց դուրսը քանդակներով ու դոդուածներով գեղեցիկ զարդարուած է։ Այս մատրան Հիւսիսային Արեւելեան կողմը շատ հարուստ զարդերով զարդարուած եկեղեցի մ'ալ կայ, որուն կից է արտաքոյ կարգի գեղեցիկ կամարով մատուռ մի։ Կամարը զանազան դաշտեր բաժնուած է, զորոնք դոյնզդոյն քարերով շինուած խճանկարներ կը զարդարեն։ Պատերն ամենագեղեցիկ Արաբացի քանդակներ փորուած են, որոնց մէջ կրկնաթեւ խաչեր յաճախ կը տեսնուին։ Անիին աւերակներուն իւրաքանչիւր մասին, իւր կամարներուն, խոյակներուն, սիւներուն, սիւներուն և ամէն տեսակ զարդերուն վրայ Սարակինոսեան ու գոթացի հարուստ ճարտարապետութեան ծագումը կատարեալ կրնայ տարվուիլ։

«Նոր խորհրդածութեան դաշտ մ'ալ կը բանայ, քաղքին պարսպին Արեւմտեան ծայրն եղող հսկայաձեւ շէնքի մ'աւերակը, որն որ անուտարակոյս թագաւորական պալատն է։ Իւր

գոտիկոններն հարիւրաւոր խուցեր ունին. մեծ դուռը Պարակլինոսեան ամենագեղեցիկ ոճով է, և իւր մեծ սրածայր կամարին վրայ պատուհան մ'ունի։ Բոլոր պատին երեսը խճանկարներով հարուստ զարդարուած է. խոշոր քառակուսի քարերէ շինուած պատին արուեստն այն աստիճանի կատարեալ է՝ որ քարերուն կցուածները դեռ այսօր շինուածի պէս կ'երևան։ Պալատին կից ապառաժ պատերուն մէջ քանի մ' այրեր կան որոնց ներսի կողմը քանդակներով լեցուն են, բայց նոցա մէջ շատ անարուեստ և անկատար կերպարանքներ ալ կան։ Այս այրերէն մէկուն պատերուն վրայ ճարտար արուեստով սիւներ փորուած են իրենց խոյակներովն ու պատկներովը։ Մայր եկեղեցւոյն վարի կողմը խիստ բարձր բայց նեղ կամրջի մը մնացորդները կը նշմարուին, որն որ ժամանակաւ Ախուրեան գետին երկու եզերքն իրարու հետ կը միացնէր, բայց հիմա միայն իւր խարիսխներն երկու եզերքին առջևը մնացած են,,։

Անի քաղաքը տեսնող Հայու աչքերը առանց արտասուք թափելու՝ անկարելի է որ նոյն վիճակաւորն և հիանալի վայրէն բաժնուի։

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

ԱՌՈՒՄՆ Ի ՅՈՒՆԱՑ

—

Քրիստոսի 1020 թուականին երբոր Գագիկ Ա. թագաւորն վախճանեցաւ, նորա երկու որդւոցը մէջ թագաւորութեան յաջորդութեան պատճառաւ մեծ խռովութիւն ծագեցաւ, վասն զի Յովհաննէս Սմբատ նորա երէց որդին՝ որ իրաւամբ հօրը իշխանութեան ժառանգն էր, թէպէտ և իմաստուն՝ բայց պատերազմի անհմուտ և ծանրամարմին լինելով՝ իւր փոքրիկ եղբայրն Աշոտ, առոյգ և քաջ պատերազմող երիտասարդը կը ցանկար որ թագաւորութիւնն ինքն առնու։ Եւ երբ տեսաւ որ Սմբատ բռնութեամբ գահը նստաւ. ինքն ալ զօրք ժողովեց և փոքր ժամանակ ետ և անդ. ապատակելէն և թագաւորին երկիրներն ապականելէն զկնի՝ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորին քովը գնաց, և անկէ ալ շատ զօրք օգնութեան առնելով եկաւ Անի քաղքին առջևը բանակեցաւ։ Սմբատ այս դէպքէն այլայլելով՝ անմիջապէս

հրաման տուաւ որ պատերազմի փողերը զարնուին և զօրքն՝ որոնք 40,000 հետեւակ և 20,000 ձիաւոր էին, քաղքէն դուրս ելնեն և Աշոտին բանակը զարնեն։ Նոյն ժամանակը Վրացի իշխան մը որ Աֆխազաց թագաւորին կողմանէ դեսպան ուղարկուած էր, Սմբատին առջևն ելնելով՝ ասաւ, «Տո՛ւր ինձ հրաման, և ես Աշոտը բռնած քու առջևդ կը բերեմ»։

Թագաւորն իւր եղբօր քաջութիւնը դիտնալով՝ նորա պատասխանեց, «Առիւծին կորիւնը չտեսած՝ զանի մի՛ արհամարհեր»։

Երբոր բանակներն իրարու դիմաց ճակատեցան, Վրացի իշխանը նիզակը ձեռքը բռնած յառաջ անցաւ և սկսաւ պոռալ, «Աշոտ ով որ է յառաջ գայ»։ Սրի երիտասարդն այս խօսքին վրայ բարկացած՝ քաշեց պողովատիկ սուրն և ձին երագելով՝ Վրացւոյն մօտեցաւ. և թեթեւ շարժմամբ մը նորա նիզակէն պրծելով՝ սրովն նորա երկաթէ սաղաւարտին մի այնպիսի ուժով զարկաւ որ զանիկայ մինչև կուրծքն երկու ճեղքեց և ձիէն վար ձգեց։ Սակէց վերջը զօրաց հրաման տուաւ որ զարնուելու սկսին, որոնք իւրեանց առաջնորդին այս գործքէն օրինակ առնելով՝ սաստիկ քաջութեամբ զարնուեցան և Սմբատին զօրքը հա-

բաշար յաղթելով քաղքին մէջ փախուցին, որոնց շատերն չը կրնալով ներս մտնել՝ Սխուրեան դեռին մէջ անկան և խեղդուեցան։ Նախարարներն երբոր այսչափ կոտորածն և եղած ապականութիւնները տեսան, կամեցան միջնորդ լինել և երկու եղբայր իրարու հետ հաշտեցնել։ Ուստի Պետրոս կաթուղիկոսն և Աֆխազաց Գորգի թագաւորն հետերնին առած՝ նոցա դացին և շատ խօսքերով երկու կողմն իրարու հետ հաշտեցուցին։ Երկիրն ալ երկու մասի բաժանեցին, Անի քաղաքն իւր մերձաւոր գաւառներովը Սմբատին, իսկ Պարսից և և Վրաց սահմանակից երկիրներն Աշոտին տուին, և որոշեցին որ Սմբատին մեռնելէն վերջը՝ Աշոտ բոլոր Հայոց թագաւոր լինի։ Բայց Սրմ բատ այս խաղաղութիւնը երկայն ժամանակ չկարողացաւ վայելել. վասն զի Աշոտին կողմնակից իշխաններէն մէկը Գորգիին վրայ տմբաստանութիւն ընելով թէ՝ «Շատիկ գաւառն որ իմ կալուածս էր, անիրաւութեամբ ձեռքէս յափշտակեց»։ Զանիկայ թագաւորին դէմ գրգռեց, և այս պատճառաւ Գորգի Սմբատին վերայ զօրք ուղարկեց. որոնք Հայաստան մտնելով լսեցին թէ Սմբատ ուրիշ տեղ իշխաններ է. դիշերանց յանկարծ վրան յարձակեցան երբոր

նա հանգիստ կը քնանար։ Սմբատ անկողնէն ցատկեց և փախչելու աճապարեց, բայց մարմնոյն ծանրութեան համար չկարողացաւ շուտով փախչիլ. Գորդիին զօրքն հասան և բռնեցին իսկ իւր քովի նախարարները քաջութեամբ ետ քաշուելով՝ իւրեանց ետեւէն ինկող զօրքը մինչեւ Անիին դրան առջեւ սաստիկ ջարդեցին, և բոլոր ճանապարհները նոցա դիակներով լցուցին և անվտանգ քաղաքը մտան։ Թշնամւոյն զօրքն անկէ դարձան եկեղեցիները կողոպտեցին և Սմբատը հետերնին առած՝ իւրեանց թագաւորին տարին, Գորդի զանիկայ բանտ դնել տուաւ. բայց քիչ մ՚ վերջը անկէ երեք բերդ առնելով աղատ թողուց։

Հաղիւ թէ Սմբատ այս վտանգէն ազատեաւ, ուրիշ մեծագոյն վտանգի մէջ ինկաւ, որովհետև իւր եղբայրն Աշոտ միշտ թագաւորութիւնը ձեռք ձգելու թէկն ածելով՝ և տեսնելով որ քանի որ Սմբատ կենդանի է՝ իւր բաղձանքին հասնիլը անկարելի պիտի լինի՝ ուստի մտածեց որ զանի սպաննէ, և այս խորհուրդը դիւրաւ գլուխ հանելու համար մի այսպիսի հնարք մտածեց։ Ինքզինքը ծանր հիւանդ ձեւացնելով՝ անկողին մտաւ և իւր պառկած սենեկին մէջ մի դարան շինել տուաւ. այս ընելէն վերջը եղբօրը

մարդ ուղարկեց և իւր վիճակն իմացնելով՝ աղաչեց որ իւր քովը գայ և այն սաստիկ ցաւերուն մէջ զինքը մխիթարէ։ Բարեսիրտ թագաւորն եղբօրը սիրոյն համար անմիջապէս ելաւ նորա քովը գնաց, բայց անկողնոյն մօտեցած ժամանակը դարանին մէջ ինկաւ և սկսաւ Աշոտին աղաչել որ իւրեան խնայէ։ Սպիրատ իշխանն՝ որուն Աշոտ յառաջագոյն պատուիրած էր որ Սմբատ դարանն իյնելէն անմիջապէս վերջը առանձին տեղ մի տանի և սպաննէ. եկաւ զանիկայ դարանէն հանեց. իբրեւ թէ Աշոտին հրամանը պիտի կատարէ, և տարաւ Անի քաղաքն իւր տեղը նստեցուց, ասելով թէ՝ «Լաւագոյն է որ իմաստուն թագաւոր ունենանք, քան թէ մի անդուխ բռնաւոր»։ Իսկ ինքը Դուին քաղաքն Սպուսվար ամիրային քովը գընաց, վախնալով որ Աշոտ իւր այս ըրածին համար իւրեան չարիք մը կը հասցնէ, և այն տեղ անհիմն կասկածանքի համար ամիրայէն սպաննուեցաւ։

Այս ժամանակներս Սկիւթացւոց մէջէն Թիւրք ըսուած ցեղը Վասպուրական արշաւեց, և շատ կողմեր սրով և հրով սկսաւ ապականել։ Սինեքերիմ թագաւորն այս բանիս դոյժն առնելով՝ իւր զօրքը պատրաստեց և իւր Դաւիթ

որդւոյն և Թապաւհ զօրապետին յանձնելով թշնամւոյն վերայ ուղարկեց։ Եկան շարուեցան Հայոց զօրքը թշնամեաց դիմացը, որոնց այնչափ բազմութիւնէն և նոցա այլանդակ կերպարանէն թէպէտ փոքր ինչ վախցան, բայց իւրեանց քաջ առաջնորդներուն օրինակը շուտ մ'այս երկիւղը փարատեց և վիրենք քաջութեամբ պատերազմելու յորդորեց։ Պատերազմն սկսելուն պէս՝ Թաթարներն սկսան իւրեանց սաստիկ նետերն Հայոց վերայ տեղացնել և անոնցմէ շատ մարդ վիրաւորեցին։ Հայ զօրքն որոնց մեծ մասը սուսերաւոր և սիղաւոր էր՝ տեսնելով որ կը տկարանան, սուրերնին քաշեցին և թշնամւոյն վրայ յարձակելով անոնցմէ շատ մարդ ջարդեցին, և դաշտին երեսը նոցա դիակներով ծածկեցին, բայց կատարեալ յաղթութիւնը չկրցան ստանալ, վասն զի իրենցմէ տասնապատիկ աւելի թշնամին իւր նետից տարափին անդադար տեղալով՝ իւրեանց մեծ մասը վիրաւորած էր։ Թապաւհ սպարապետը տեսաւ որ ա՛լ դէմ գնելը կարելի չէ, արքայորդւոյն ասաց. պէտք ենք ետ քաշուիլ, վասն զի զօրաց մեծ մասը վիրաւորած ինկած է, և այս նետից դէմ նոր տեսակ զգեստ մի պատրաստելու ենք։ Բայց սրի պատանին նորա խօսքին ականջ չը

դրաւ, և կրկին զարնուելու սկսաւ, կամելով յաղթութիւնը բռնի ստանալ։ Թապաւհ տեսնելով որ վտանգն երթալով կը մեծնայ, արքայորդին ալ չկրցաւ խօսքով համոզել որ ետ դառնայ, բարկութեամբ նորա վերայ յարձակեցաւ, և կռնակին սաստիկ զարնելով՝ ասիպեց որ ետ քաշուի։ Այսպիսով պատերազմը դադրեցաւ և Թապաւհ ու Դաւիթ Սենեքերիմին քովը դարձան, որոնցմէ թագաւորը պատերազմին դրժբաղդ վախճանն իմանալով՝ մեծ տրտմութեան ու հոգի մէջ ինկաւ, վասն զի դիտեր որ թշնամին կամաց կամաց յառաջ պիտ'որ քալէ և իրեն ու ժողովրդեան մեծամեծ չարիքներ պիտ'որ հասցնէ։ Ուստի ասոյ առջևն առնելու համար, շուտ մի բոլոր իշխանք կանչեց և նոցա հետ խորհուրդ ընելով՝ որոշեց որ երկիրը Յունաց կայսրը յանձնէ, և ինքն նորա իշխանութեան ներքեւ խաղաղ տեղ մը քաշուի ու հանգիստ կեանք անցնէ։ Այս խորհրդով նամակ մի գրեց և իւր Դաւիթ որդւոյն ձեռքովը կայսեր յուղարկեց, որուն մէջ բոլոր իւր երկիրներն նորա կուտար, և նոցա փոխարէն Սեբաստիա քաղաքն իւր շրջակայ գաւառներովն կը խնդրէր։ Վասիլ կայսրն Դաւիթի մեծ ընդունելութիւն ըրաւ, և նորա հօրը խնդիրը սիրով յանձն առ-

նելով՝ մոռնաւոր հրովարտակով մի Սեբաստիան իրեն տուաւ։ Սենեքերիմ այս հրովարտակն առաջին պէս, բոլոր ընտանիքն, ազգականներն, իշխանք և զօրքն ժողվեց Սեբաստիա գընաց, և դաշանց թղթով Վասպուրականը կայսեր յանձնեց։

Սկիւթացիք Վասպուրականի մէջ Հայոց յաղթելէն զկնի՝ ամէն կողմ տարածուեցան, որոնցմէ Տուղրիլբէկ անուամբ իշխան մի մեծ դումարտակով մը Սմբատին երկիրը մտաւ և սկսեց Նիդ դաւառն ասպատակել։ Վասակ Պահլաւունի Սպարապետն՝ որն որ նոյն ժամանակ այն դաւառին Բշնի ըսուած բերդին մէջ կ'նստեր, շուտ մի այս յարձակումը թագաւորին խմացուց։ Իսկ ինքն նոյն միջոցին քսանչ գրտնուած (500) զօրքն առած՝ Բշնին իւր Գրիգոր որդւոյն յանձնեց և Թշնամւոյն վրայ գնաց, և նախ վանք մի մտնելով՝ ինքն և բոլոր զօրքն խոստովանեցան մեղքերնին և այնպէս սկսան աներկիւղ յառաջ երթալ։ Ճամբան գիւղի մի պատահեցան, ուր Թշնամեաց մի մասն մտած բոլոր գիւղացիներն անխնայ ջարդած՝ տները թալանելու հետ էր, Սպարապետն այս անողորմ գործքին վրայ սաստիկ բարկացաւ, և նոցա վրայ յարձակելով՝ նոյն տեղը երկու հարիւր հոգի ջարդեց, մնացածն ալ՝ իւրեանց բանակն հալածեց և յաղթանակաւ յառաջ անցնելով՝ նոցա բուն բանակին հասաւ։ Իւր քիչւոր զօրքն իւրեանց առաջին յաղթութենէն քաջալերուած նոցա բազմութիւնն բանի տեղ չդրին և աներկիւղութեամբ նոցա վրայ յարձակեցան և մեծ կոտորած ըրին։ Պատերազմին սաստկացած միջոցին Սկիւթացւոց բանակէն Վիթխարի խափշիկ մի՝ որն որ իւր սաստիկ քաջութեանը համար Եօթնգայլ կը կոչուէր, Հայոց բանակին ձայն տուաւ և Վասակը յառաջ կանչեց որ իւր հետ մենամարտի։ Յառաջ անցաւ քաջ Սպարապետն և նորա նիզակի հարուածն պարապի հանելով՝ ինքը սրոնչն նորա գլուխը զարկաւ երկու կտրեց և մեռած գետինը փռեց։ Այս տեսնելով Սկիւթացիք սաստիկ կատղեցան և պատերազմն աւելի ևս սաստկացնելով՝ երկու կողմանէ ալ շատ կոտորած եղաւ։ Սպարապետը տեսաւ որ իւր սակաւաթիւ զօրքն տկարանալու վրայ է, զարկաւ ճղքեց Թշնամւոյն բազմութիւնն ու Սերկեւլոյ լերան վրայ ելաւ որ վրանը ինչ հանդչի։ Անդ բարձր տեղ մի քնացած միջոցին, չար գիւղացի մը զինքը հրելով վար նետեց և սպաննեց։

Ոմանք կը պատմեն թէ՝ Վասակ Սկիւթա-

ցուց ջրքին յաղթելէն զկնի, Սերկեւլոյ լերան վրայ եւլած՝ Աստուծոյ գոհութեան աղօթք կը մատուցանէր։ Նոյն ժամանակը թշնամեաց մին՝ որ անդ թաքստի էր, գլխուն մեծ քար մը զարկաւ և սպաննեց։

Սմբատին թագաւորութեան Գ. տարին Գորգի Սիխաղաց թագաւորը Յունացմէ ապստամբեցաւ, որուն՝ Կեդրենոս Յոյն պատմագրին պատմածին նայելով՝ նաեւ Սմբատ շատ օգնութիւն ըրաւ։ Եւ երբ որ Վասիլ կայսրը Գորգիին վրայ գալով՝ նորա յաղթեց և սկսաւ Հայաստանի սահմանը մօտենալ, Սմբատ վախցաւ որ անիկա իր երկիրն ալ կը յարձակի, ուստի անմիջապէս Գեորգ կաթուղիկոսին ձեռքովն նորա նամակ մը յուղարկեց, որուն մէջ կը խոստանար իր մահուանէն զկնի Անի քաղաքն և բոլոր իր տիրած երկիրներն իրեն յանձնել, որովհետեւ ինք որդի չունէր որ իրեան յաջորդէր։ Կայսրը շատ ուրախութեամբ նամակն ընդունեց, և թագաւորին հետ հաշտութիւն ըրաւ։

Կաթուղիկոսն այս պատգամաւորութիւնն կատարելէն զկնի, Սեբաստիա քաղաքը Սենեքերիմի քով գնաց, և քանի մի տարի հոն, քիչ մ՚ալ Դաւիթ՝ Կարուց թագաւորին քովը

մնալով՝ Անի քաղաքն իւր աթոռը դարձաւ։ Բայց հոն թագաւորին և իշխանաց ըրած անկարգութիւնները տեսնելով՝ թող տուաւ Վասպուրական դնաց։ Սմբատ Պետրոս կաթուղիկոսին այս գործքին վրայ զայրացած, ուզեց զանի ձեռք ձգել և պատժել, այս պատճառաւ մի նամակ գրեց կաթուղիկոսին և կրկին Անի հրաւիրեց, խոստանալով որ այնուհետեւ իրեն մտիկ կընէ։ Վասպուրականին Յոյն իշխաններն ալ միջնորդ բռնեց։ Կաթուղիկոսն այս նենգութենէն խաբուեցաւ և դարձաւ նորէն Անի եկաւ, բայց թագաւորն հրաման տուաւ որ զինքն անմիջապէս բռնեն բանտ դնեն, և նորա տեղը Գէորգորոս Սանահնի վանքին առաջնորդը կաթուղիկոս դրաւ։ Գէորգորոս կաթուղիկոսութիւնն առածին պէս սկսաւ ամէն տեսակ անկարգութիւն գործել, շատ անարժան մարդիկ եպիսկոպոս ձեռնադրեց, յայտնի յանցանաց համար իւրեանց աթոռէն մերժուածները նորէն ետ դարձուց և անոնց նման շատ գործքեր ըրաւ։ Հայոց եպիսկոպոսները և բոլոր եկեղեցականք այս անկարգութիւններն տեսնելով՝ զթագաւորն և Գէորգորոսին կաթուղիկոս ըլլալուն մասնակից եղող իշխանները նզովեցին, և կաթուղիկոսին անունն եկեղեցիներու մէջ յիշելէն դադ-

ռեցան։ Այս նղովքը թագաւորին և իշխանաց շանթի հարուածի պէս եկաւ, ուստի անմիջապէս Պետրոս կաթողիկոսն մէկ ու կէս տարի բանտը կենալէն զկնի հանեցին և շատ աղաչանքով հաւանեցնելով՝ կրկին իւր աթոռը նստեցուցին. իսկ Դէոսկորոս Սահակի վանքը քաշուեցաւ։

Եօթն տարի չափ եղաւ Կոստանդին կայսրը՝ Վասլին եղբայրը հիւանդանալով և մահուան մօտ ըլլալն իմանալով, իւր ծառայներուն հրաման տուաւ որ Հայոց տղէն մէկն գտնեն և իրեն բերեն։ Ծառաները Կիրակոս անունով քահանայ մի գտան, որն որ Կաթողիկոսարանին մէջ հիւրերու հոգաբարձու էր և նոյն ժամանակը Կոստանդնուպոլիս կը գտնուէր, և առին կայսեր բերին։ Կոստանդին՝ Սմբատին Անիին համար տուած նամակն այս քահանային ձեռքը տուաւ և ըսաւ. «Այս գիրը տար՝ Հայոց թագաւորին տուր և իմ կողմանէս ըսէ. որովհետեւ ինծի ալ ամէն հողածիններուն պէս մահուան հրաւէր եկաւ, ա՛ռ քու նամակդ ու թագաւորութիւնդ որդւոյդ տուր»։ Կիրակոս նամակն առաւ քովը պահեց, և երբ որ Միքայէլ Դ. Յունաց կայսրութեան գահը նստաւ, տարաւ նորա տուաւ։ Այս անզգամութեան

գործքին դառն հետեւութիւնները քիչ ժամանակուան մէջ սկսան երեւալ, որոնց վրայ իրաւամբ կ'ողբայ Արիստակէս Լաստիվերտացի ժամանակակից պատմագիրն՝ որն որ այն ամէն տառապանքներն աչքովը տեսաւ։

Արիստակէս այս ժամանակներս Վասպուրական նահանգին Բերկրի քաղքին մէջ պատահած զարհուրելի դէպք մը կը պատմէ։ Բերկրի քաղաքը, կ'ըսէ, ժամանակէ մը 'ի վեր Պարսիկները Յունաց ձեռքէն առած՝ և Խորիկ անունով անզութ և անողորմ իշխան մը հոն քաղաքապետ դրած էին։ Յունաց իշխանները Գանձի Հայ իշխանին հետ մէկտեղ նորէն զանիկա պատերազմաւ ետ առին։ Խորիկը քաղքին միջնաբերդը փախուցին, և այնուհետեւ սկսան անհոգ նստիլ։ Քաղաքապետը մօտաւոր ամիրաներուն ծածուկ մարդ յուղարկեց և օգնութիւն խնդրեց, որոնք անմիջապէս զօրքերին առին և եկան յանկարծ Յոյն ու Հայ զօրաց վրայ յարձակեցան, շատերը ջարդեցին և մէկ մասն ալ գերի բռնեցին։ Այն միջոցին Խորիկ միջնաբերդէն դուրս ելաւ, և իւր դաղանային վրէժն հանելու համար, հրաման ըրաւ որ մէկ մարդաչափ խորունկ փոս մը փորեն և գերիներէն այնչափ մարդ մորթեն, մինչեւ որ

նոցա արեամբը փոսը լեցուի, և երբ որ հրամանը կատարուեցաւ, ինքը մնաւ նոյն արեան մէջ և լուացուեցաւ։

Սմբատ (20) տարի թագաւորութիւն ընելէն զկնի Անիին մէջ վախճանեցաւ. իւր եղբայրն Աշոտ՝ որն որ թագաւորութեան յաջորդ պիտ՚որ ըլլար, իրմէ փոքր ինչ յառաջ մեռած ըլլալով՝ միայն անոր որդին Գագիկ թագաւորութեան ժառանգ մնաց։

Սմբատ մեռնելուն անմիջապէս Հայաստանեն խաղաղութիւնը բոլորովին խռովեցաւ, նախարարաց միմեանց հետ ունեցած կապը խզեցաւ, արտաքին թշնամիք ալ երկիրն անտերունչ տեսնելով՝ ամէն կողմանէ ներս յարձակեցան, և Հայոց թագաւորութեան խախտած և քայքայած շէնքին սաստիկ բաղխելով՝ անոր վերջին կործանումը բերին, որուն աղետալի նկարագիրն այս և հետեւեալ գլխուն մէջ պիտի պատմենք։

Ինչպէս վերը պատմեցինք. Յովհաննէս Սմբատ թագաւորն իւր կենդանութեան ժամանակը Յունաց կայսեր թուղթ տուած էր որ իւր մահուանէն ետքը Անի քաղաքն և նոցա շրջակայ գաւառներն իւրեան տայ։ Երբ որ ինքն վախճանեցաւ Միքայէլ կայսրն Հայոց դեսպան

ուղարկեց և պահանջեց որ քաղաքն իւրեան յանձնեն։ Նոքա այս բանս յանձն չառին, ասոր համար կայսրն երեք անգամ մեծ բանակներ յուղարկեց, որոնք համարձակ Հայաստան մտան։ շատ տեղեր աւար առին, ջարդեցին ու քանդեցին. շատ քաղաքներ ալ զիրենք պաշտպանող չգտնելով՝ Յունաց անձնատուր եղան։ Նախարարներն ու զօրքն իւրեանց մէջ ծագած երկպառակութեան համար չկրցան միաբան Յունաց դէմ ելլել և երկիրը պաշտպանել։ Վասն զի Վեստ Սարգիս իշխանն՝ Սմբատին տէրութեան հոգաբարձուն, նորա մահուան ժամանակը բովանդակ արքունի գանձն ժողված իւրեան առած էր, և կուզէր ինքն թագաւորել, շատ ամրոցներ և քաղաքներ ալ իւրեան կողմնակից զօրքերով բռնած էր։ Իսկ Վահրամ Պահլաւունի սպարապետն և ուրիշ շատ իշխաններ Սարգսին դէմ զատ միաբանութիւն մ՚ըրած էին։

Այս խառնակութեան մէջ Դաւիթ Անհաղին Աղուանից թագաւորը Հայաստան յարձակեցաւ և շատ աւեր և ապականութիւն ըրաւ, Նոյնպէս Յոյներն ալ առաջին երեք արշաւանաց յաջողելուն վրայ վստահացած՝ չորրորդ անգամ 100,000 զօրքով Հայաստան մտան և մինչեւ

Անիին տալիւն հասնելով՝ ամէն կողմանէ սաստիկ պաշարեցին։ Քաղքին մէջն եղող զօրքն՝ որոնց թիւն 30,000 էր, տեսնելով որ վերջին վտանգի մէջ են, և միանդամայն Յոյն զօրքին ամէն օր իւրեանց տուած սաստիկ անարգանքէն և խօսած հայհոյութիւններէն արտաքոյ կարգի դրգռուելով՝ իւրեանց Վահրամ սպարապետին առաջնորդութեամբն քաղքին Ծաղկոց ըսուած դռնէն յանկարծ դուրս յարձակեցան, և այնպիսի կատաղութեամբ մը Յոյներն սկսան զարնել որ նոքա սարսափած՝ կռնակնին դարձուցին և խառն 'ի խուռն փախան։ Հայոց գունդն նոցա ետեւէն ինկաւ և որուն որ հասաւ առանց խնայելու զարկաւ սպաննեց, և քաղքին առջևի կանանչազարդ դաշտն կոյտ կոյտ դիակներով լեցուց, մինչեւ արեան յորդութիւնն Ախուրեան գետին ջուրը կարմիր ներկեց։ Վահրամ սպարապետին սիրտն այս ողջմելի տեսարանէն շարժելով՝ աղաչանօք եւ յորդորանքով հազիւ իւր զօրքն համոզեց որ պատերազմը դադրեցնեն։ Յոյները պատերազմի դաշտին վրայ 20,000 մեռեալ և վիրաւորեալ թողին։ Իսկ բանակին մնացած մասն ցիր և ցան եղած փախաւ։ Այս յաղթութենէն ետքը Վահրամին հետ միաբանած նախարարները

խորհուրդ ըրին և Պետրոս կաթողիկոսն ալ կանչելով՝ Սմբատին եղբօրորդին Գագիկ Բ. առոյգ և իմաստուն երիտասարդն՝ Հայոց թագաւոր օծել տուին։ Սարգիս այս բանս իմանալուն անմիջապէս, դանձերն առաւ Անիի բերդը մտաւ ամրացաւ։ Գագիկ արիական քաջասրտութեամբ եկաւ մինակ նոյան քով դնաց և յորդորեց որ անկէ ելլէ երթայ. այն ալ հաւանեցաւ. բայց իւր ձեռքին տակն եղող քաղաքներն և բերդերը թագաւորին չտուաւ, այլ կը մտածէր որ Յունաց երկիրն անցնի և նոցա ամէնն ալ կայսեր տայ։

Գագիկ նորա միտքն իմանալով՝ քանի մի հոգի հետն առած՝ նորա բանակը դնաց, մտաւ աներկիւղ նորա վրանն և բռնեց Անի բերաւ, և սաստիկ պատիժներով սոսկելով՝ ամէն բերդերն և թագաւորական դանձերն ձեռքէն առաւ։ Երբ որ այսպէս բոլոր հայրենի երկիրներուն տիրեց, զօրքն ժողվեց ամէն կողմ պտըտեցաւ, և իւրեան չհնազանդողները նուաճեց. և այնուհետև Գրիգոր Պահլաւունին Վահրամ սպարապետին եղբօր որդին հետն առած՝ Թաթարաց վրայ յարձակեցաւ. որոնք նոյն միջոցին բազմութեամբ իւր երկիրը մտած կ'աւարէին և կ'ասպատակէին. զարնուեցաւ նոցա հետ Հուրասան

դետին քով, և այսպէս թագաւորութիւնն ամէն կողմանէ ապահովցնելով՝ իր ամրոը դարձաւ։ Բայց հազիւ թէ տարի մը խաղաղութեամբ անցաւ, Սարդիս՝ անհաւատարիմ ու տիրանենդ իշխանն սկսաւ դարձեալ թագաւորին դէմ դաւաճանութիւն ընել։ Վասն զի Գադիկ այս նենդաւորին կեղծաւորութենէն խաբուելով՝ նորա յանցանքին թողութիւն տուած և կրկին մեծ պատուոյ հասցուցած էր։

Սարդիս՝ փոխանակ այս բարերարութեան երախտագէտ լինելու, զանիկայ իր միտքը գերեալ յառաջ տանելու դործածեց։ Այս միջոցներուն Կոստանդին Մոնոմախոս՝ Միքայէլ Ե.ին յաջորդելով՝ Սարդսին դաղտնի դրդռութեամբն Գադիկին դեսպան յուղարկեց և Անին իր դաւառներովն հանդերձ անկէ ուզեց։ Թագաւորն ամենեւին յանձն չառաւ իր արքունի քաղաքն օտարի տալ, այն ժամանակ կայսրը Միքայէլ Ասիոյ իշխանը մեծ բանակով Հայաստան յուղարկեց որ քաղաքը բռնութեամբ առնու։ Գադիկ հայագունդ զօրքով նորա դիմացն ելաւ, զարկաւ ցրուեց նորա բանակն և յաղթանակաւ իր քաղաքն դարձաւ։ Կոստանդին իր զօրացն յաղթուելուն դոյժն առածին պէս՝ Նիկոդայոս զօրապետն աւելի շատ զօրքով Գադի-

ին վրայ յուղարկեց. Դուինի Սպասալար ամիրային ալ թուղթ մը գրեց որ ինքն ալ արեւելեան կողմանէ նորա վրայ յարձակի, և այսպէս զանի ամէն կողմէն նեղը ձգեն։ Այսպիսի ծանր և վտանգաւոր վիճակի մէջ էր Հայոց երիտասարդ թագաւորն, բայց իր անվեհեր քաջութիւնը շատ մ'իրեան ինչ ընելիքը սորվեցուց։

Անմիջապէս իր զօրութիւնը մէկտեղ հաւաքելով՝ իմացաւ որ չիկրնար երկու մեծ թշնամեաց մէկտեղ յաղթել. ուստի աճապարեց Սպասալարին շատ ընծայներով դեսպաններ յուղարկեց, և նորա հետ հաշտութիւն ըրաւ։ Այնուհետեւ բանակին գլուխն անցած՝ քալեց Յունաց վրայ, որոնք յաղթութիւնն ոտոյդ դիտնալով՝ կը փութային ժամ յառաջ Հայոց հետ զարնուիլ։ Բանակներն միմեանց մօտենալուն անմիջապէս, հրաման տուաւ Հայոց թագաւորն որ փողերն հնչուին և զօրքն զարնուելու սկսին։ Պատերազմն երկայն չտեւեց, վասն զի Հայ զօրքը սաստիկ յարձակմամբ Յունաց բանակը ցրուեց և փախչելու ստիպեց։

Կոստանդին կայսրը տեսնելով որ չկարողացաւ իր կամքը բռնութեամբ յառաջ տանիլ, յունական նենգութիւնն ձեռք առաւ, որուն Վեստ Սարդիս ալ իր կողմակիցներովն

աղէկ օգնական լինելով՝ Հայոց թագաւորութեան վերջին կործանումը բերաւ։ Որովհետեւ այս իշխանին խորհրդովը կայսրը Գագիկին սիրոյ թուղթ մը գրեց, և զանիկայ հրաւիրեց որ գայ իրեն հետ տեսութիւն մ'ընէ, ու խաչի եւ աւետարանի վրայ երդում ընելով՝ կը խոստանար զինքը նորէն իւր երկիրը յուղարկել որ խաղաղութեամբ թագաւորէ. Մինչ կ'ըսէր, մէկ անգամ մի գիշեր տեսնեմ, այնուհետեւ քեզի քու թագաւորութիւնդ որդւոց որդի կը թողում, բայց իմաստուն թագաւորն Յունաց խաբէութիւններն և նենգաւորութիւնն գիտնալով՝ յանձն չառաւ։ Այն ժամանակը Սարգիս և իւր դաւակիցներն սկսան թագաւորն յորդորել որ երթայ, և Պետրոս կաթողիկոսն ալ միջնորդ բռնելով՝ խոստացան որ իրենք հաւատարիմ կը մնան և իւրեան համար կեանքերնին կը զոհեն։ Այս խոստումին հաստատուն պահելու համար կաթողիկոսն և ամէն իշխանք Բրիստոսի աւետարանի երդման գիր մը գրեցին և թագաւորին տուին։

Գագիկ սորա վրայ վստահացած՝ Անիին բանալիները Պետրոս կաթողիկոսին յանձնեց և ինքն ելաւ կայսեր քովը գնաց, թէպէտ և Վահրամ սպարապետն և ուրիշ զինքն թագաւորեցնող իշխանք խորհուրդ կուտային որ չերթայ։ Կոստանդնուպոլիս հասնելուն անմիջապէս բոլոր կայսերական իշխանները հանդիսաւոր և մեծ պատուով զինքն դիմաւորելու եկան, և առին կայսեր տարին։ Կոստանդին քանի մ'օր նորա պատիւ ըրաւ, և յետոյ սկսաւ պահանջել որ Անին իւրեանց տայ. եւ երբ որ Գագիկ ամենեւին մէկ եղանակաւ մը նորա չզիջաւ, բարկանալով՝ զինքն կղզւոյ մը մէջ բանտի պէս արգելեց։ Իշխանք Հայոց՝ այս եղածը իմանալուն անմիջապէս խորհրդի ժողովեցան, եւ ոմանք կուզէին Անին Ափխազայ Բագրատ թագաւորին, ոմանք ալ Ապրանիոյ Դաւիթ թագաւորին տալ։ Կաթողիկոսն տեսնելով որ ինչպէս որ լինի քաղաքն օտարաց ձեռքն ելիսի անցնի, ուստի Սամուսատ նստող Յոյն իշխանին այսպէս թուղթ մը գրեց, «Թագաւորիդ իմացուր որ ես Անին եւ քաղաքս մեր տերութեան երկիրներն իւրեանց կուտամ, բայց անիկայ ասոր ինչ հատուցում կ'ընէ»։ Կայսրը Սամուսատի իշխանէն Կաթողիկոսին միտքն իմանալով՝ անմիջապէս նորա շատ սուակ յուղարկեց եւ զանազան պատիւներ շնորհեց, որոնցմով Պետրոս հաճելով՝ Անին 40 բանալիները կայսեր յուղարկեց, բանալիներուն հետ միասին տերութենեն իշխաններն ալ

կայսեր թուղթ մը յուղարկեցին, որուն մէջ կ'ըսէին թէ Ս.Նին եւ բոլոր արեւելեան Հայոց թագաւորին իշխանութեան ներքեւ եղող երկիրները քեզի կուտանք։

Մոնոմախոս երբ որ այս նամակն առաւ, կանչեց զԴաւիթ նամակն եւ բանալիներն նորա առաջը դնելով՝ ըսաւ. Ս.հաւատիկ քու իշխաններդ բոլոր քու երկիրներդ ինծի տուին։ Թագաւորն սաստիկ այլայլեցաւ, եւ հառաչելով պատասխանեց. Ս.ստուած՝ իմ եւ նենգաւոր իշխաններուս մէջ դատաստան ընէ, բայց իմ ժողովրդիս հաճութեամբը որ Հայաստանին տէրն ու թագաւորն ես եմ, ուստի թէպէտ և իշխաններս զանիկայ քեզի տան, ես ամենեւին չեմ տար։ Կայսրը 30 օր անդադար աշխատեցաւ որ Գաւիթէն հաւանութիւն առնու, բայց անկարելի եղաւ. վասն զի անիկայ միշտ հաստատութեամբ պատասխան կուտար թէ՝ Չեմ կրնարիմ հայրենեացս երկիրն և մայրաքաղաքս քեզի տալ։ Յետոյ տեսնելով որ իւրեանց Հայաստան դառնալու եւ նորին թագաւորութիւնը ձեռք ձգելու ամենեւին յոյս եւ միջոց մը չկայ, ակամայ կայսեր զիջաւ, եւ Ս.Նին տեղ Պիդու քաղաքն և քանի մ'ուրիշ քաղաքներ առնելով հոն քաշուեցաւ։ Յետոյ Գաւիթ Յունաց երկ-

րին մէջ միշտ ազգին անդին կը շրջէր, և ուր որ կ'երթար, Յոյներուն նեղութիւն կուտար նոցա իւրեան ըրած չարեացը վրէժն առնելու համար։

Կոստանդին կայսրը Գաւթիկին հաւանութիւնն առնելուն անմիջապէս՝ Պարակամանոս ներքինին շատ զօրքով Հայաստան յուղարկեց որ Ս.Նին առնու. բայց անիկայ երբ որ քաղքին առջեւն հասաւ, դռները փակուած գտաւ, սրովհետեւ թագաւորին հաւատարիմ Ճեացած զօրքն և ժողովուրդն՝ իւրեանց տիրոջը վրէժն առնելու համար Ս.Նիի մէջ ժողվուած եւ պատերազմի պատրաստուած էին։

Պարակամանոս քաղաքը պաշարեց և ըսկսաւ զարնել. ներսիններն ալ քաջութեամբ դէմ կը դնէին և բիւր հայհոյութիւններով և թշնամանիչ խօսքերով բոլոր Յունաց ազգը կը նախատէին։ Քիչ մը ժամանակ այսպէս անցնելէն յետոյ, օր մը քաղաքացիք և զօրքը կարգի մտնելով՝ յանկարծ դուրս յարձակեցան, յունական բանակը չարաչար զարկին և ցիր ու ցան ըրած փախուցին, և նոցա աւարը ժողվելով քաղաքը դարձան։ Դեռ այս յաղթութեան ուրախութեան մէջն էին, երբոր դոյժ հասաւ որ Գաւթիկ թագաւորն Յունաստան արշաւելուեր է և ա՛լ ետ պիտի չդառնայ, ամենուն ուրախու-

թիւնը տրտմութեան փոխուեցաւ, բոլոր քաղաքն մեծէն մինչեւ փոքրը սուգ մտան և կոծով ու լայքով ոկսան իւրեանց թագաւորն ողբալ եւ նորա դաւաճանութիւն ընողներուն դէմ անէծք և նզովք կարդալ. վասն զի իւրեանց ապաղայ վիճակն յայտնի կը դուշակէին։ Եւ տեսնելով որ ա՛լ ուրիշ հնարք չկայ, Յունաց զօրապետն ետ կանչեցին և խաղաղութեամբ քաղաքն իւրեան յանձնեցին։

Ահաւասիկ «Անի» հռչակաւոր քաղքին աւերումը, որուն պատճառաւ Հայաստանը աղետից և թշուառութեանց առպարէզ դարձաւ։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽՀ-ՍՍՀ
Ա. ՄՈՍԱՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

ԿՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԼՈՒՏԵՐԱԿԱՆ ՀԱՅԵՐ

—

Այս վերնագրով մի գրքոյկ ունենամք հրատարակելի եթէ դրամական միջոցներս մեզ թոյլատրէ, շուտով ի լոյս կ'ընծայեմք։

6344
6345
6346
6347
6348

0001997

ՀՀ Ազգային գրադարան
NL0002305

ՀՀ Ազգային գրադարան
NL0002304

ՀՀ Ազգային գրադարան
NL0002303

ՀՀ Ազգային գրադարան
NL0002302

ՀՀ Ազգային գրադարան
NL0001997